«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ. ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱ»

Հետազոտական ուսումնասիրություն

Ուսումնասիրության նպատակն է դիտարկել և հասանելի դարձնել ընտանեկան բռնության կամ միջանձնային բռնության դեպքերում իրավախախտների նկատմամբ էլեկտրոնային հսկողության կիրառման՝ ընտրված մի քանի երկրների փորձը:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

«Էլեկտրոնային հսկողությունը միջանձնային բռնության դեպքերում. չափանիշներ, սկզբունքներ և պետությունների պրակտիկա»

Լուիզ Հուպեր
Միջազգային խորհրդատու

Հունիս 2023թ.

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Սույն աշխատանքում
Արտահայտված կարծիքները
հեղինակինն են և
կարող են չհամընկնել
Եվրոպայի խորհրդի
պաշտոնական քաղաքականության
հետ: Սույն փաստաթղթերի
ամբողջական կամ մասնակի
վերարտադրման կամ
թարգմանության վերաբերյալ
բոլոր հարցումները պետք է
հասցեագրվեն Հաղորդակցությունների
տնօրինությանը (F-67075 Strasbourg
Cedex or publishing@coe.int):
Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր
այլ նամակները պետք է հասցեագրվեն
Ժողովրդավարության հարցերով
գլխավոր տնօրինության Գենդերային
հավասարության բաժնին:

Կազմը և էջադրումը.
Computer service LLC

Լուսանկարը.
© Shutterstock

Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
www.coe.int

Տպագրվել է.
© Եվրոպայի Խորհուրդ, հունիս 2023թ.

Բովանդակություն

Ներածություն....5
Եվրոպայի խորհրդի չափանիշներն ու սկզբունքները....5
Ուսումնասիրության նպատակը....6
Մեթոդաբանություն....7
Պետության՝ պաշտպանելու պարտականությունը....8
Ի՞նչ է էլեկտրոնային հսկողությունը....9
Զոհակենտրոն էլեկտրոնային հսկողություն....10
Հսկողությունն իրավախախտի տեսանկյունից12
Էլեկտրոնային հսկողության կիրառման էթիկական կողմը....12
Խտրականության բացառում....12
Երեխաներ....13
Հաշմանդամություն ունեցող անձինք....14
Հղիություն....14
Համաձայնություն....15
Էլեկտրոնային հսկողության կիրառման սահմանները....17
Ռիսկերի բազմակողմանի գնահատում....17
Տեղեկատվությունը....19
Կիրառումը և ծանուցումը....21
Որոշման գործողության ժամկետը....22
Համակարգի տեխնիկական առանձնահատկությունները....22
Տեխնոլոգիական ռիսկերը....22
Սարքերը....23
Հսկիչ «ապարանջան»....23
«Ապարանջանի» ամրացումը....24
Ընդունիչ սարք....24
Իրավախախտի ընդունիչ սարքը....25
Ոտնձգությունից տուժած անձի ընդունիչ սարքը....25
Արգելված գոտիները....26
Հսկողության պայմանների խախտում....27
Հսկիչ կենտրոն....27
Խախտումների տեսակները....28
Ծանուցում և արձագանք....29
Միջգերատեսչական համագործակցություն....32
Հսկողության դադարեցում կամ կասեցում և սարքի հեռացում....34
Չեղարկումը մինչև հսկողության ժամկետի ավարտը....34
Ժամանակավոր հեռացում....34

Ինչ է տեղի ունենում, երբ իրավախախտին կամ ոտնձգությունից տուժած անձին ուղարկում են քրեակատարողական հիմնարկ: 36
Քրեակատարողական հիմնարկից ժամանակավորապես ազատում 37
Քրեակատարողական հիմնարկից ազատում 37
Ինչ է տեղի ունենում, եթե էլեկտրոնային հսկողություն իրականացնելու վերաբերյալ որոշում է կայացվում քրեակատարողական հիմնարկում գտնվող իրավախախտի նկատմամբ: 38
Ինչ է տեղի ունենում, եթե իրավախախտը կամ ոտնձգությունից տուժած անձը արտաքսվել են կամ լքում են տարածքը: 38
Հսկողության ժամկետի ավարտը 39
Խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցներ 41
Տվյալների պաշտպանություն 41
Տվյալների օգտագործումը և խախտումները 42
Անձնակազմի վերապատրաստում 43
Հիմնական նկատառումները 44
Հավելված 1. Ռիսկերի գնահատում, անհետաձգելի միջամտության որոշումներ և պաշտպանական որոշումներ 46
Օգտագործված գրականություն 48
Նյութեր լրացուցիչ ընթերցանության համար 49

Երախտիքի խոսք

Հեղինակը իր երախտիքն է հայտնում «Direção-Geral de Reinserção e serviços Prisonais» գործակալության աշխատակիցներ Ռուի Աբրունխոզա Գոնզալվեսին, Վեռա Էլոյին և Մարիանա Լոպեշին (Պորտուգալիա), Պալոմա Սորիա Մոնտանեզին (Իսպանիա), Թամար Դեկանոսիձեին (Վրաստան), ովքեր աջակցել են սույն ուսումնասիրության անցկացման համար իրավական նյութեր գտնելուն: Սույն ուսումնասիրությունում արտահայտված տեսակետները հեղինակ(ներ)ինն են և դրանք կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի պաշտոնական մոտեցումների հետ:

Ներածություն

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում էլեկտրոնային հսկողության (ԷՀ) արմատները գալիս են ազատազրկումը որպես ծայրահեղ միջոց կիրառելու, քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածությունը և կրկնահանցավորությունը նվազեցնելու քաղաքականությունից: Դրա արդյունքում կյանքի են կոչվել ոչ մեծ ծանրության հանցանքներ կատարած անձանց ազատ արձակելու ծրագրեր, ինչի շնորհիվ նրանք հնարավորություն են ստացել շարունակել աշխատել, ապրել ազատության պայմաններում և տարածք է ազատվել քրեակատարողական հիմնարկներում:[1] Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Ստամբուլյան կոնվենցիա)[2] պահանջների իրականացման շրջանակներում պետությունները ձեռնամուխ են եղել էլեկտրոնային հսկողության կիրառմանը միջանձնային բռնության դեպքերի առնչությամբ՝ նախքան քրեական կամ քաղաքացիական վարույթում մեղքի հաստատումը, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումների կատարմանը նպաստելու համար: Առանձին դեպքերում, էլեկտրոնային հսկողությունը կարող է ոտնձգությունից տուժած անձանց նկատմամբ բռնության կիրառումը և կյանքից զրկելը կանխելու, որոշումների խախտման փաստերը արձանագրելու, իրավախախտների նկատմամբ արդյունավետ հսկողություն սահմանելու օգտակար գործիք հանդիսանալ, ոտնձգությունից տուժած անձ, : Նպատակը կրկնահանցավորության գործակիցները և հետագա բռնության վտանգը նվազեցնելն է, մասնավորապես տեխնոլոգիական միջոցների օժանդակությամբ հետևելով, թե արդյո՞ք իրավախախտը պահպանում է արգելված տարածքը չհատելու կամ ոտնձգությունից տուժած անձից ոտնձգությունից տուժած անձորոշակի հեռավորություն պահպանելու պահանջը: Զոհակենտրոն մոտեցումը ենթադրում է, որ ոտնձգությունից տուժած անձինք մշտապես պետք է տեղեկացված լինեն էլեկտրոնային հսկողության կիրառման սահմանափակումների, դրա իրականացման եղանակների և այն քայլերի մասին, որոնք իրենք պետք է ձեռնարկեն արտակարգ իրավիճակներում: Ոտնձգությունից տուժած անձին վնաս կամ մահ պատճառելու վտանգը, առանձին դեպքերում, կարող է այնքան բարձր լինել, որ անհրաժեշտություն առաջանա կիրառել այլընտրանքային այնպիսի միջոց, ինչպիսին է օրինակ ազատությունից զրկելը: Էէլեկտրոնային հսկողությունը, հանդիսանալով իրավախախտի ազատության սահմանափակման ձև, պետք է իրականացվի օրինական և համաչափ ձևով՝ նկատի ունենալով ոտնձգությունից տուժած անձի համար առկա ռիսկայնության մակարդակը:

Եվրոպայի խորհրդի չափանիշներն ու սկզբունքները

- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (CETS no. 210).
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2014)4 հանձնարարական անդամ պետություններին էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ[3] (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2014թ. փետրվարի 19-ին) և Բացատրական հուշագիր (2016թ.).
- Էլեկտրոնային մոնիթորինգի չափանիշներ և էթիկա. էլեկտրոնային մոնիթորինգի սահմանման և կիրառման համար պատասխանատու մասնագետների համար նախատեսված ձեռնարկ :

[1] Ibarra P. Gur O. and Erez E. (2023):
[2] Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (CETS No.210):
[3] Տե՛ս https://rm.coe.int/09000016800cc24b:

Ուսումնասիրության նպատակը

Սույն ուսումնասիրությունը նախաձեռնվել և իրականացվել է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ոստիկանության խնդրանքով: Ուսումնասիրության նպատակն է դիտարկել և հասանելի դարձնել ընտանեկան բռնության կամ միջանձնային բռնության դեպքերում իրավախախտների նկատմամբ էլեկտրոնային հսկողության կիրառման՝ ընտրված մի քանի երկրների փորձը: Թեև էլեկտրոնային հսկողությունը հաճախ օգտագործվում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ այլընտրանք հանդիսանում դատապարտմանը հետևող ազատությունից զրկելուն, , մեր ուսումնասիրության կոնկրետ նպատակն է դիտարկել էլեկտրոնային հսկողության կիրառումը անհետաձգելի միջամտության որոշումների, պաշտպանական որոշումների և սահմանափակման որոշումների պարագայում (այդ որոշումների մասին լրացուցիչ տեղեկատվության համար տես Հավելված 1-ը):

Հայաստան

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենք) էլեկտրոնային հսկողությունը սահմանում է որպես «ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ էլեկտրոնային այլ միջոցներով հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի և վարքագծի նկատմամբ»:

Ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության սարքերը՝ անհետաձգելի միջամտության որոշումներ և համապատասխան զսպող միջոցներ կիրառելիս, ներառյալ՝

i) Իրավախախտին անհապաղ հեռացնել ոտնձգությունից տուժած անձի հետ համատեղ բնակության վայրից և արգելել վերադարձը.
ii) Առանձին ապրելու դեպքում, իրավախախտին արգելել այցելել ոտնձգությունից տուժած անձի բնակարան, աշխատավայր, դպրոց, ժամանցի վայրեր՝ մինչև հրամանով սահմանված վերջնաժամկետը.
iii) Սահմանել պահանջ՝ իրավախախտի՝ ոտնձգությունից տուժած անձից որոշակի հեռավորության վրա մնալու վերաբերյալ.
iv) Առգրավել իրավախախտի մոտ գտնվող զենքը.
v) Արգելել իրավախախտի՝ ոտնձգությունից տուժած անձի հետ շփումը:

Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարան վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Օրենքը նաև նախատեսում է, որ էլեկտրոնային հսկողություն կիրառելիս նվազագույնի պետք է հասցվի անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշման կատարման ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության արդյունքներով հայտնաբերվում է կամ արձանագրվում է իրավախախտում, ապա համապատասխան տվյալները պահվում են մինչև դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության համակարգը պետք է ունենա օրենսդրությամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ:

Այժմ Հայաստանի իշխանությունները մշակում են այդ օրենքի կիրառմանը միտված իրավակարգավորումներ:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության հեղինակների կողմից իրականացվել է ընտանեկան բռնության նկատմամբ էլեկտրոնային հսկողության վերաբերյալ առկա գրականության ուսումնասիրություն (տե՛ս «Օգտագործված գրականություն» բաժինը), ընդ որում օրենսդրության և պրակտիկայի առավել մանրամասն ուսումնասիրման նպատակով շեշտադրում է կատարվել չորս երկրների փորձի վրա: Պորտուգալիան և Իսպանիան էլեկտրոնային հսկողության տեխնոլոգիաներ որդեգրած առաջին պետությունների շարքում են, մինչդեռ Վրաստանը և Ֆրանսիան վերջերս են ներդրել այդ համակարգը: Ըստ անհրաժեշտության հղում է կատարվում նաև այլ երկրների համակարգերին:

Ֆրանսիա	2019թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2019-1480 օրենքը միտված է ընտանիքում բռնության դեմ պայքարին https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000039684243
Վրաստան	2006թ. «Կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց պաշտպանության և աջակցության մասին» թիվ 20 օրենք, նոր խմբագրությամբ https://matsne.gov.ge/en/document/view/26422?publication=18 «Կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց պաշտպանության և աջակցության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք, 13.01.2010թ. https://matsne.gov.ge/ka/document/view/91360?publication=0 2020թ. օգոստոսի 26-ի կառավարության թիվ 126 որոշում «Էլեկտրոնային վերահսկողության իրականացման կանոնը հաստատելու մասին» https://www.matsne.gov.ge/ka/document/view/4974072?publication=0
Պորտուգալիա	2009թ. թիվ 112 օրենքը սահմանում է ընտանեկան բռնության կանխարգելման, դրանից տուժած անձանց պաշտպանության և օգնության նպատակով իրավական դաշտը https://diariodarepublica.pt/dr/detalhe/diario-republica/180-2009-129489 2010թ. թիվ 33 օրենքը կարգավորում է հեռակառավարման տեխնիկական միջոցների (էլեկտրոնային հսկողություն) օգտագործումը և ուժը կորցրած դիտարկում քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված էլեկտրոնային հսկողության իրականացումը կանոնակարգող օգոստոսի 20-ի թիվ 122/99 օրենքի դրույթները»: https://diariodarepublica.pt/dr/detalhe/diario-republica/171-2010-131084 2001 թվականի թիվ 26 հրահանգը սահմանում է էլեկտրոնային հսկողության համար օգտագործվող սարքավորումների ընդհանուր տեխնիկական մասնագրերը https://diariodarepublica.pt/dr/detalhe/portaria/26-2001-337579
Իսպանիա	2004թ. դեկտեմբերի 28-ի «Գենդերային բռնության դեմ համապարփակ պաշտպանության միջոցների մասին» թիվ 1/2004 օրգանական օրենք https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-2004-21760 2013 թ. արձանագրություն «Գենդերային բռնության ոլորտում վտարման միջոցների և տույժերի կատարման նկատմամբ էլեկտրոնային հսկողության համակարգի կիրառման արդյունքների մասին»

	https://violenciagenero.igualdad.gob.es/profesionalesInvestigacion/seguridad/protocolos/pdf/ProtocoloDispositivos2013.pdf 2015թ. արձանագրություն «Գենդերային բռնության և տուժերի կիրառման նկատմամբ քրեակատարողական ոլորտում հեռակառավարման տեխնիկական միջոցներով հսկողության համակարգի մասին» https://violenciagenero.igualdad.gob.es/profesionalesInvestigacion/seguridad/protocolos/pdf/Protocolo_Ambito_Penitenciario_Dispositivos_Telematicos2015.pdf

Պետության՝ պաշտպանելու պարտականությունը

Պետությունը կրում է ոտնձգությունից տուժած անձին պաշտպանելու և իրավախախտի իրավունքների պաշտպանության բավարար երաշխիքներ ապահովելու անմիջական պատասխանատվությունը:

9. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային հսկողություն նախատեսող որոշումների իրականացման գործընթացին ներգրավված են մասնավոր կազմակերպությունները, պետական մարմինները շարունակում են կրել շահառու անձանց նկատմամբ միջազգային էթիկական և մասնագիտական չափանիշներին համապատասխան արդյունավետ վերաբերմունքի պատասխանատվությունը: CM/Rec (2014) 4

Էլեկտրոնային հսկողությունը հաճախ իրականացվում է որևէ մասնավոր ընկերության կողմից՝ կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա: Հանրային գործառույթ իրականացնելու համար մասնավոր տեխնոլոգիաների ցանկացած օգտագործումը պետք է լինի օրինական, անհրաժեշտ և համաչափ այն նպատակին, որին պետք է ծառայի: Պետությունները պետք է նաև ապահովեն բավարար երաշխիքներ՝ թափանցիկության, գնումների գործընթացների, հաշվետվողականության, վերահսկողության և փոխհատուցման առումով:[4] Կարևոր է, որ համապատասխան պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կողմերի դերակատարություններն ու պարտականությունները հստակ սահմանված լինեն:

Ի վերջո, պետությունը կրում է գործառնական առանցքային պարտականություն՝ պաշտպանելու անհատներին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու հիմնարար իրավունքների խախտումներից: Դա ներառում է կյանքի իրավունքի (հոդված 2), խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի (հոդված 3) և անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի (հոդված 8) ապահովումը: Ստամբուլյան կոնվենցիան[5] պետություններից պահանջում է ձեռնպահ մնալ կանանց նկատմամբ բռնությունից և ապահովել, որ պետական մարմիններն ու պաշտոնյաները գործեն այդ պարտավորությանը համապատասխան: Կոնվենցիայի կտրվածքով, այն նաև պետություններից պահանջում է ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ոչ պետական սուբյեկտների կողմից բռնության դրսևորման կանխարգելման, հետաքննության, պատժի և փոխհատուցման տրամադրման հարցում պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու առումով: Կոնվենցիայով սահմանված

Արդյունավետ պաշտպանություն չտրամադրելըկարող է հանգեցնել նրան, որ մարդու իրավունքների խախտման համար պետությունը պատասխանատվության ենթարկվիայն պայմաններում, երբ այդ պարտականությունների մի մասը կամ ամբողջը պայմանագրով վերապահված է մասնավոր սուբյեկտի, ինչպիսին է օրինակ հսկողություն իրականացնող մասնավոր ընկերությունը:

[4] Privacy International, (տարին նշված չէ):
[5] Ստամբուլի կոնվենցիա, հոդված 5:

Պորտուգալիայում էլեկտրոնային հսկողության համար պատասխանատու պետական մարմինը Սոցիալական վերականգնման գլխավոր տնօրինությունն է: Էլեկտրոնային հսկողության տեխնիկական միջոցներ գնելու, տեղադրելու, շահագործելու և պահպանելու համար այն կարող է դիմել այլ կազմակերպությունների օգնության:[6] Այդ սուբյեկտների միջև փոխհարաբերությունները և հաղորդակցման ուղիները սահմանվում են օրենսդրությամբ:

Ի՞նչ է էլեկտրոնային հսկողությունը:

Էլեկտրոնային հսկողությունը ընդհանուր հասկացություն է, որը վերաբերում է քրեական արդարադատության գործընթացի շրջանակներում անձի գտնվելու վայրի, տեղաշարժի և հատուկ վարքագծի հսկողության եղանակներին: Էլեկտրոնային հսկողության ներկայիս եղանակները հիմնված են ռադիոալիքային, կենսաչափական կամ արբանյակային տեխնոլոգիաների վրա: Հսկողությունը սովորաբար իրականացվում է հատուկ սարքի միջոցով, որը կցվում է մարդու մարմնին և հեռակառավարվում է:[7]

Երկկողմանի հսկողություն. սովորաբար իրականացվում է իրավախախտի ոտքի կոճին կամ թևին ամրացվող հատուկ ապարանջանի միջոցով, ընդ որում անձին տրամադրվում է հատուկ սարք, որը տագնապի ազդանշանով նրան տեղեկացնում է իր կողմից պայմանները խախտելու և նախորոշված աշխարհագրական գոտիներում ոտնձգությունից տուժած անձին մոտենալու մասին: Ոտնձգությունից տուժած անձին նույնպես տրամադրվում է սարք, որն ապահովում է ձայնային, տեսողական և/կամ վիբրիացիոն ահազանգ այն մասին, թե արդյոք իրավախախտի սարքը գտնվում է արգելված տիրույթում: Սարքը կարող է ապարանջանի կամ բջջային հեռախոսի տեսք ունենալ և ոտնձգությունից տուժած անձը պետք է այն պահի իր մոտ: Ընդունիչը սովորաբար տեղադրվում է և՛ ոտնձգությունից տուժած անձի և՛ իրավախախտի բնակարանում:[8] Սարքը ապահովում է երկկողմանի տեքստային և ձայնային հաղորդակցություն օգտատիրոջ հետ: Ահազանգերը և հաղորդագրությունը, ինչպես նաև ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի գտնվելու վայրի մասին տեղեկությունը փոխանցվում է հսկիչ կենտրոն: Սարքերը հիմնականում օգտագործում են GPS (Գլոբալ դիրքորոշման համակարգ), իսկ եթե ազդանշանը կորում է, կարող են անցնել GSM-ի (բջջային հաղորդակցության գլոբալ համակարգ):

Ռադիոհաճախականության ապարանջաններ. Ռադիոհաճախականության ապարանջաններն ամրացվում են իրավախախտի կոճին, իսկ բազային կայանը տեղադրվում է անձի բնակարանում: Թեև դրանք կիրառելի են տանը անձի գտնվելը դիտարկելու համար, սակայն չեն վերահսկում անձի աշխարհագրական դիրքը և, հետևաբար, պիտանի չեն սահմանափակման որոշումների կատարման համար:

GPS-ի միջոցով հսկողությունն իրականացվում է GPS նավիգացիոն չիպ և SIM քարտ պարունակող ապարանջանի միջոցով, որն ամրացվում է իրավախախտի կոճին և բջջային ցանցի միջոցով ուղղակիորեն հաղորդակցվում է հսկիչ կենտրոնի հետ: GPS ազդանշանի թույլ լինելու դեպքում այն նախատեսում է բջջային ազդանշանների արձակման հնարավորություն: Հաղորդակցման հաճախականությունը, կախված է սարքի մոդելից և կոնֆիգուրացիայից:[9]

---

[6] Պորտուգալիա, օրենք 33/2010, հոդված 9:
[7] CM/Rec(2014)4:
[8] Շոտլանդիայի կառավարություն (2019թ.):
[9] Privacy International (2022թ.):

Ֆրանսիայում ընտանեկան բռնության դեպքերի աճի դեմ պայքարելու նպատակով Ֆրանսիայի կառավարությունը նոր օրենսդրություն մշակեց, որի համաձայն իրավախախտները պարտավոր են էլեկտրոնային ապարանջան կրել: Օրենքն ընդունվել է 2019թ. դեկտեմբերի 19-ին:[10]

Նոր օրենսդրության համաձայն՝ քրեական կամ ընտանեկան դատարանը, որպես խափանման միջոցի իրականացման պայման, իրավախախտից կարող է պահանջել էլեկտրոնային ապարանջան կրել: Եթե նման որոշումն կայացվել է ընտանեկան դատարանի կողմից, ապա իրավախախտն իրավունք ունի հրաժարվելու դրա կատարումից, և այդ դեպքում դատավորը կարող է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնել:

Էլեկտրոնային ապարանջանը, որը խելացի ժամացույց է հիշեցնում, GPS սարքի օգնությամբ հետևում է իրավախախտի տեղաշարժին: Ոտնձգությունից տուժած անձին ևս տրվում է տեղորոշման սարք (թրեքեր), որը նա պետք է մշտապես կրի: Եթե իրավախախտը խախտի հեռավորությունը և շատ մոտենա ոտնձգությունից տուժած անձին, թրեքերն ազդանշան կուղարկի հսկող կառույցին/պաշտոնատար անձին, ինչպես նաև անվտանգության ապահովման համար պատասխանատու մասնավոր ընկերությանը, որը իրավախախտի հետ կապ կհաստատի և կհրահանգի հեռանալ: Եթե իրավախախտն անտեսի նախազգուշացումը, ոստիկանությունը կմիջամտի և իրավախախտին մեղադրանք կառաջադրվի:

Ապարանջանը հագեցված է մարտկոցով, որն առանց լիցքավորման կարող է աշխատել 48 ժամ: Ապարանջանի մարտկողը չլիցքավորելը դիտարկվում է որպես խախտում:[11]

Լրացուցիչ նյութեր.

- ✓ անձՈտնձգություններից տուժած անձանց աջակցություն Եվրոպա՝ https://victimsupporteurope.eu/activeapp/wp-content/files_mf/1433926458W2_DomesticViolenceGPSProximityNotificationSystem_SVEP.pdf
- ✓ Privacy International. Էլեկտրոնային հսկողություն GPS ապարանջանների միջոցով. տեխնոլոգիական ձեռնարկ, Privacy International 9 փետրվարի 2022թ.՝ https://privacyinternational.org/explainer/4796/electronic-monitoring-using-gps-tags-tech-primer
- ✓ Ընտանեկան բռնություն. «Էլեկտրոնային ապարանջանները առաջին քայլն են, բայց մենք պետք է ավելի առաջ գնանք». (france24.com),
- ✓ Le point sur le bracelet anti rapprochement en France (protegerlenfant.fr)

Զոհակենտրոն էլեկտրոնային հսկողություն

Ստամբուլյան կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները պարտավոր են զոհակենտրոն մոտեցում ցուցաբերել: Համակարգը գործարկող մարմինների, ոտնձգությունից տուժած անձանց և վերջիններիս աջակցություն ցույց տվող ծառայության միջև սերտ կապ ապահովող զոհակենտրոն երկկողմանի հսկողությունը, որը երաշխավորում է, որ ոտնձգությունից տուժած անձը լսված և լսելի լինի, միտված է արդարադատության գործընթացին ոտնձգությունից տուժած անձի ինտեգրմանը:[12] Դա ոտնձգությունից տուժած անձանց նաև կարող է ավելի լավ տեղեկացված լինելու

[10] Ֆրանսիա, օրենք թիվ. 2019-1480 Բաժին 4: Քաղաքացիական օրենսգրքում կատարվում է փոփոխություն՝ ներառվում է էլեկտրոնային հսկողություն նախատեսող նոր հոդված (515-11-1 հոդված):

[11] Ընտանեկան բռնություն. «Էլեկտրոնային ապարանջաններն առաջին քայլն են, բայց մենք պետք է ավելի առաջ գնանք». (france24.com):

[12] Ibarra, P et al (2023):

հնարավորություն ընձեռել և բարելավել նրանց անվտանգության ընկալումը: Խախտումների փաստերն ավելի հեշտ են ապացուցվում էլեկտրոնային հսկողության տեխնոլոգիաների միջոցով, և ոտնձգությունից տուժած այդ մասին հաղորդելիս իրենց ավելի ապահով կարող են զգալ:[13] Նման տեսակի ծրագրերը նաև օգնում են կանխել ոտնձգությունից տուժած անձի ակնկալիքների և հսկողության համակարգի սահմանափակումների միջև անհամապատասխանությունը: ԱՄՆ-ում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոտնձգությունից տուժած անձինք նման պայմաններում իրենց առավել ուժեղ են զգում, իսկ անվտանգության ապահովման տարածքի պլանի տրամադրումը հեշտացնում է իրենց փոխհարաբերությունների և ապագայի ծրագրերի վերագնահատումը:[14]

Ոտնձգությունից տուժած անձին հսկիչ սարք կամ ապարանջան կրելու պահանջ ներկայացնելը կարող է սթրեսի աղբյուր դառնալ և վերջինիս ստիպել զգալ, որ ինքը տույժ է կրում: Ոտնձգությունից տուժած անձին կարող է թվալ, որ այդ սարքը իրավախախտին թույլ կտա գտնել իրեն իր ապահով վայրում:[15] Եթե ահազանգը շատ հաճախ հնչի, դա կարող է ավելի շատ վախ առաջացնել ոտնձգությունից տուժած անձի մոտ, ընդ որում իրական ժամանակում ահազանգերը կարող են նրա մոտ խուճապ առաջացնել, նույնիսկ եթե իրավախախտի կողմից աշխարհագրական սահմանափակումների խախտումը պատահական է եղել: Այդ ամենը շատ ավելի վատ հետևանքներ կարող է ունենալ, եթե իրավախախտը ոտնձգությունից տուժած անձին անհանգստացնելու նկատառումով հաճախակի խախտի արգելված հեռավորությունը: Ոտնձգությունից տուժած անձանց մի մասը չի ցանկանում մասնակցել նմանատիպ ծրագրերին վախի պատճառով կամ համարելով, որ նրանք կհայտնվեն բռնարարի հսկողության տակ: Էլեկտրոնային հսկողության այն ծրագրերը, որոնք ոտնձգությունից տուժած անձին չեն տեղեկացնում էլեկտրոնային հսկողության համակարգում իրավախախտի մասնակցության կամ իրավախախտի մտահոգիչ վարքագծի, օրինակ՝ ապարանջանի վնասման կամ այլ անթույլատրելի միջամտության մասին, արգելված գոտին խախտելու կամ ոտնձգությունից տուժած անձին թույլատրելի հետավորությունից ավել մոտենալու դեպքում տեքստային հաղորդում կամ այլ ազդանշան չեն ուղարկում, ԱՄՆ-ում այլևս չեն կիրառվում:[16]

Զոհակենտրոն ցուցիչներ

- ✓ Ոտնձգությունից տուժած անձին հաղորդվում է հսկիչ ծրագրում իրավախախտի մասնակցության վերաբերյալ:
- ✓ Ոտնձգությունից տուժած անձը ծանուցումներ է ստանում, երբ իրավախախտը շրջանցում է որոշման պայմանները, ինչպիսիք են ապարանջանի աշխատանքին միջամտելը, արգելված գոտին հատելը:
- ✓ Ոտնձգությունից տուժած անձին ծանուցելուց առաջ հսկիչ կենտրոնի կողմից համապատասխան դիտարկում է անցկացվում:
- ✓ Ոտնձգությունից տուժած անձինք տեղեկացված են, և նրանցից պահանջվում է գրավոր հաստատել GPS ծրագրի հնարավորությունների և սահմանափակումների մասին իրենց հասկանալի լեզվով ծանուցված լինելու փաստը:
- ✓ Ոտնձգությունից տուժած անձինք ստանում են ուսուցում սարքից օգտվելու վերաբերյալ:
- ✓ Իրավախախտին ծրագրում ընդգրկելու համար ոտնձգությունից տուժած անձի մասնակցությունը պարտադիր է:

[13] Շոտլանդիայի կառավարություն (2019թ.), էջ 53:
[14] Ibarra P. Gur O. and Erez E. (2023)
[15] Le point sur le bracelet anti rapprochement en France (protegerlenfant.fr)
[16] Ibarra P. Gur O. and Erez E. (2023)

Հսկողությունն իրավախախտի տեսանկյունից

Իրավախախտի նկատմամբ GPS-ի միջոցով իրականացվող հսկողությունը միջամտական բնույթ ունի է և բացահայտում է բազմաթիվ անձի կյանքի վերաբերյալ մանրամասներ, երբեմն նեղ անձնական բնույթի: Առանց համապատասխան երաշխիքների՝ ոստիկանության կողմից այն կարող է օգտագործվել այլ նպատակներով, քան պարզապես պաշտպանական կամ անհետաձգելի միջամտության որոշման կատարումն է: Որոշման պայմանները չխախտելու մշտական լարվածության կամ ապարանջանի չափից և քաշից առաջացող ֆիզիկական կաշկանդվածության պատճառով հսկողությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ իրավախախտի առողջական վիճակի և բարեկեցության վրա:[17]

Էլեկտրոնային հսկողության առկայությունը դժվարացնում է իրավախախտում կատարելու հնարավորությունը, քանի որ հայտնաբերումից խուսափելու համար իրավախախտից պահանջվում են լրացուցիչ ջանքեր՝ խաթարելու սարքի աշխատանքը կամ ոտնձգությունից տուժած անձին հանդիպելու արգելված գոտիներից դուրս գտնվող տարածքում:[18] Սակայն, այն կարող է նաև օգնել իրավախախտին վերհիշել արգելված գոտու սահմանները, եթե վերջինս մոռանա դրանք:[19]

Սկանդինավյան երկրներում հիմնական մարտահրավերները վերաբերում են էլեկտրոնային հսկողության օգտագործմանը նոսր բնակեցված տարածքներում, մասնավորապես, երբ սարքավորումները տեղադրելու և ստուգելու համար անձնակազմը ստիպված է լինում երկար ճանապարհ անցնել, երբեմն՝ ինքնաթիռով, իսկ հսկողության ենթարկվող անձինք՝ դժվարություններ են ունենում հսկող կառույցի նախանշած այցելություններին գնալու առումով: Որպես խնդիր նշվել են նաև սահմանը հաճախակի հատելը:[20]

Էլեկտրոնային հսկողության կիրառման էթիկական կողմը

27. Էլեկտրոնային հսկողության սարքավորումները որևէ պարագայում չեն կարող օգտագործվել կասկածյալին կամ իրավախախտին դիտավորությամբ ֆիզիկական կամ հոգեկան վնաս կամ տառապանք պատճառելու համար: Նախարարների կոմիտեի հանձնարարական CM/Rec(2014)4:

Դիտավորությամբ ֆիզիկական կամ հոգեկան վնաս պատճառելը դիտվում է որպես պետության կողմից ՄԻԵԴ 3-րդ հոդվածի խախտում:

Խտրականության բացառում

7. Էլեկտրոնային հսկողություն նշանակելիս կամ իրականացնելիս սեռով, ռասայով, մաշկի գույնով, ազգային պատկանելությամբ, լեզվով, կրոնով, սեռական կողմնորոշմամբ, քաղաքական կամ այլ կարծիքով, ազգային կամ սոցիալական ծագմամբ, սեփականությամբ, ազգային փոքրամասնության հետ կապով, ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված որևէ խտրականություն պետք է թույլ չտրվի՝ : CM/Rec(2014)40210

Ընտանեկան բռնության գործերով էլեկտրոնային հսկողության կիրառման մշտադիտարկումն ու գնահատումը տեղի է ունենում կանոնավոր պարբերականությամբ՝

[17] Kerr J. et al, (2019) p5
[18] Belur J. et al, (2020)
[19] Kerr J. et al (2019)
[20] Holdsworth Dr E. and Párkányi Dr E, (2022) p3

երաշխավորելու, որ հսկողության կիրառման որոշումը խտրականության հիմքեր չի պարունակում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ռասայի, մաշկի գույնի և ազգության հատկանիշներին, քանի որ երբեմն փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ կիրառվում են պատասխանատվության անհամաչափ միջոցներ:

Երեխաներ

26. Էլեկտրոնային հսկողություն կիրառելու և դրա կիրառման պայմանների վերաբերյալ որոշում կայացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր կասկածյալի կամ իրավախախտի տարիքը, հաշմանդամությունը և այլ համապատասխան հատուկ պայմանները կամ անձնական հանգամանքները: CM/Rec (2014)4

Անչափահասների արդարադատության համակարգում էլեկտրոնային հսկողության կիրառման վերաբերյալ եվրոպական համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էլեկտրոնային հսկողությունը կարող է վնասակար հետևանքներ է ունենալ այն անչափահասների համար, որոնք ստիպված են էլեկտրոնային հսկողության ապարանջան կրել, քանի որ նման պարագայում բացակայում է երեխայակենտրոն մոտեցումը: Էլեկտրոնային ապարանջանները սահմանափակում են երեխաների ներգրավվածությունը իրենց տարիքին բնորոշ միջոցառումներին, իսկ սարքի տեսանելիությունը մեծացնում է երեխայի՝ դատական միջոցների կիրառման ենթարկված լինելը բացահայտելու հնարավորությունը և պիտակավորման ռիսկը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ երեխաները երբեմն խուսափում են իրենց տարիքի երեխաների հետ սպորտային պարապմունքներին և այլ միջոցառումներին մասնակցելուց: Երեխաների բարեկեցությանը միշտ չէ, որ առաջնահերթություն է տրվում:[21] Ուսումնասիրության հեղինակների եզրակացությամբ աջակցությունն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ այն տրամադրվի երեխաների գործերով մասնագիտացված, վերապատրաստված պրոֆեսիոնալների կողմից, որոնք առաջին հերթին կանդրադառնան անչափահասին հանցավոր կյանքից զերծ պահելու ռազմավարությանը, իսկ հսկողության համակարգերը կարտացոլեն երեխաների սոցիալական և անհատական կարիքները՝ հաշվի առնելով տարիքը և անձնական հանգամանքները:[22] Պաշտպանական կամ անհետաձգելի միջամտության որոշումների համատեքստում իրավախախտ անչափահասների նկատմամբ էլեկտրոնային հսկողության կիրառման օրինակներ չեն գտնվել: Հաշվի առնելով երեխայի առողջության և բարեկեցության վրա ազդեցության վերաբերյալ առկա լուրջ մտահոգությունը, այն թույլատրելի կարող է լինել միայն խիստ եզակի դեպքերում, եթե ընդհանրապես թույլատրելի դիտարկվի: Անչափահաս իրավախախտների նկատմամբ էլեկտրոնային հսկողության համակարգի կիրառման հարցը դիտարկելիս՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երեխայի վրա դրա հնարավոր ազդեցությանը և այլ միջամտություններով այն զուգակցելու հնարավորությանը:[23] Որպես GPS հսկողության այլընտրանք կարող է օգտագործվել ձայնային նույնականացումը, որն անչափահասների և երիտասարդ իրավախախտների պարագայում ավելի ընդունելի է համարվում:[24]

Ընտանեկան բռնության դեպքերում էլեկտրոնային հսկողություն իրականացնելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձվի ոտնձգությունից տուժած երեխաներին: Իրավական կարգավորումները և այս ոլորտում կյանքի կոչվող քաղաքականությունը պետք է հաշվի առնի երեխայի լավագույն շահերը և հսկողության ազդեցությունը նրա առօրյա կյանքի վրա: Էլեկտրոնային հսկողության կիրառումը ցանկալի չէ ցածր տարիքային խմբի

[21] Párkányi E. and Hucklesby A, (2021):
[22] Párkányi E. and Hucklesby A, (2021):
[23] ՆԿ հանձնարարականի մեկնաբանության նախագիծ (2014թ.) 4-րդ մաս, էջ3 https://rm.coe.int/16806f97b1:
[24] ՆԿ հանձնարարականի մեկնաբանության նախագիծ (2014թ.) 4-րդ մաս https://rm.coe.int/16806f97b1, էջ17:

ներկայացուցիչ հանդիսացող, ավելի ցածր մտավոր կարողություններ ունեցող կամ անկազմակերպ ապրելակերպ ունեցող է երեխաների դեպքում:[25]

Ուշադրության են արժանի առանցքային հետևյալ հարցերը.

- ✓ Երեխայի լավագույն շահերը:
- ✓ Տարիքը և հասունության մակարդակը՝ արդյո՞ք երեխան կհասկանա, թե սարքն ինչպես է աշխատում և ինչ պետք է նա անի ահազանգը հնչելու դեպքում:
- ✓ Երեխայի համաձայնությունը:
- ✓ Ծնողի կամ խնամակալի կարծիքը:
- ✓ Սարքի տեղադրումը՝ գործընթացին ծնողի կամ խնամակալի ներկա գտնվելը, մարմնի որ մասին է կցվում սարքը, էլեկտրականության աղբյուրը,
- ✓ Տեղեկատվությունը երեխային պետք է տրամադրել մատչելի ձևով՝ պարզ և հասկանալի լեզվով:

Վրաստանի օրենքի 10-բիս 1 հոդվածի 6-րդ կետը պահանջում է ոտնձգությունից տուժած անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը՝ մինչ էլեկտրոնային հսկողության իրականացումը: Եթե ոտնձգությունից տուժած անչափահաս համաձայնում է էլեկտրոնային հսկողությանը, սակայն նրա օրինական ներկայացուցիչը կամ դատախազության ներկայացուցիչը դեմ է դրան, որոշումը կայացվում է անչափահասի լավագույն շահերից ելնելով:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Որոշ դեպքերում, ելնելով անձի տարիքից կամ հաշմանդամությունից, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի ախտահարման առկայությունից, էլեկտրոնային հսկողություն չի կարող իրականացվել կամ դրա կիրառումը պահանջում է անհատական հատուկ մոտեցում:[26] Օրինակ, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այս տեխնոլոգիայի կիրառման նպատակահարմարությանը խլություն ունեցող անհատների նկատմամբ, ովքեր լսողական խնդրի հետևանքով ֆիզիկապես ի վիճակի չեն լսել ահազանգը կամ հեռախոսազանգը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անհատների նկատմամբ էլեկտրոնային հսկողություն իրականացնելու որոշում կայացնելիս՝ պետք է հաշվի առնել, թե էլեկտրոնային հսկողության կիրառումն որքանով կարող է հանգեցնել անձի առողջության վատթարացման:

Հղիություն

Հղի կնոջը կցված հսկողության էլեկտրոնային սարքը կարող է առողջական տեսանկյունից ռիսկ ներկայացնել, ինչպես նաև բժշկական օգնություն ստանալու նպատակով այցելությունների ժամանակ այն կարող է նկատվել, ինչը կնոջ համար ավելացնում է հանրության կողմից պիտակավորման ենթարկվելու ռիսկը: Առողջության համար վտանգն առաջանում է հատկապես հղիության 18-րդ շաբաթից սկսած, երբ կնոջ կոճի մասում կարող է այտուց առաջանալ, իսկ էլեկտրոնային սարքը հիմնականում կրում են հենց կոճի հատվածում:[27] Կնոջ կոճի մասում այտուցը կարող է շարունակվել նաև ծննդաբերությունից հետո և հղիության հետ կապված այլ խնդիրներ առաջանան, որոնք ֆիզիկական հետազոտության կարիք կարող են առաջացնել:

Լրացուցիչ նյութեր.

[25] Párkányi E. and Hucklesby A, (2021):

[26] ՆԿ հանձնարարականի մեկնաբանության նախագիծ (2014թ.), էջ12 https://rm.coe.int/16806f97b1:

[27] Միացյալ Թագավորության կառավարություն (2023թ.) (միգրանտներին GPS ապարանջանի տրամադրման հարցի վերաբերյալ):

- ✓ *Standards and Ethics in Electronic Monitoring: Handbook for professionals responsible for the establishment and the use of Electronic Monitoring, Nellis. M, Council of Europe 2015 (Էլեկտրոնային հսկողության չափանիշներ և էթիկա. էլեկտրոնային հսկողության համակարգերի ներդրման և օգտագործման համար պատասխանատու մասնագետների համար նախատեսված ձեռնարկ)*

Համաձայնություն

Կասկածյալներին/իրավախախտներին/բանտարկյալներին (և նրանց ընտանիքներին) պետք է բացատրվի էլեկտրոնային հսկողության ռեժիմի բնույթը, որպեսզի նրանք կարողանան տեղեկացված համաձայնություն տալ դրան կամ հրաժարվեն դրանից: Շատ կարևոր է, որ նրանք ի սկզբանե հստակ պատկերացում ունենան, թե ինչ է իրենցից պահանջվում և որոնք են խախտման չափորոշիչները: Նրանք նաև պետք է հստակ պատկերացում ունենան այն մասին, թե իրականում ինչպես են աշխատում էլեկտրոնային հսկողության տեխնոլոգիաները, մասնավորապես անձի ներկայությունը կամ բացակայությունը ֆիքսելու առումով, անձի՝ արգելված վայրերում գտնվելու փաստը արձանագրելու համար (օրինակ՝ GPS-ի դեպքում գտնվելու վայրը պարզելիս), այլապես անձը կարող է չպատկերացնել, թե խախտումները որքան հեշտությամբ և հուսալիությամբ են արձանագրվում հսկիչ կենտրոնում: Որոշ երկրներում այդ նպատակի համար կազմվում են տեղեկատու բրոշյուրներ, որտեղ բացատրվում է, թե անձից ինչ է պահանջվում, տրվում են կոնտակտային տվյալները (օրինակ, հսկիչ կենտրոնի), սակայն դա չի վերացնում նաև բանավոր բացատրության անհրաժեշտությունը, քանի որ այդ ընթացքում իրավախախտը, ոտնձգությունից տուժած անձը և նրա ընտանիքի անդամները համապատասխան հարցեր կարող են ուղղել հսկիչ կենտրոնի աշխատակիցներին:[28]

Ոտնձգությունից տուժած անձին չի կարելի ստիպել համաձայնվել էլեկտրոնային հսկողությանը:

«18. Ոտնձգությունից տուժած անձի անվտանգության ապահովման այնպիսի համակարգ կիրառելիս, որը ենթադրում է կասկածյալի կամ իրավախախտի տեղաշարժը վերահսկելու համար էլեկտրոնային հսկողության կիրառում, անհրաժեշտ է ստանալ ոտնձգությունից տուժած անձի նախնական համաձայնությունը, և պետք է ամեն ջանք գործադրվի, որպեսզի վերջինս հասկանա էլեկտրոնային հսկողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները»: CM/Rec (2014) 4

Համաձայնություն կարող է համարվել վավեր միայն այն դեպքում, եթե ոտնձգությունից տուժած անձը այն տվել է կամովին և տեղեկացված լինելու պայմաններում: Հատուկ մոտեցում են պահանջում այն դեպքերը, երբ առկա են անձի խոցելիություն մասին վկայող գործոններինչպիսիք են լեզվական խոչընդոտները, հաշմանդամությունը, ռասայական կամ էթնիկական ծագումը:

Ոտնձգությունից տուժած անձանց պաշտպանելու էլեկտրոնային հսկողության գործընթացն անխուսափելիորեն ենթադրում է ոստիկանության ներգրավումը: Ոտնձգությունից տուժած անձի նկատմամբ էլեկտրամագնիսական սարքեր օգտագործելը բարոյական տեսակետից թույլատրելի է միայն այն դեպքում, եթե դրա արդյունքում նա ավելի պաշտպանված է կրկնազոհականացումից, տանը և հասարակական վայրերում իրեն ավելի ապահով է զգում (իմանալով, որ ոստիկանությունը լավատեղյակ է իր և իրավախախտի գտնվելու վայրի մասին):[29]

---

[28] Nellis M. (2015)

[29] Nellis M. (2015)

Ոտնձգությունից տուժած անձը չպետք է պատժվի անհետաձգելի միջամտության որոշման պահանջների խախտման համար, այդ թվում՝ որոշման գործողության դադարեցման միջոցով

Կարևոր է նաև լավ պատկերացնել, որ ոտնձգությունից տուժած անձը պարտավոր չէ պահպանել անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման պահանջները: Կարող են լինել բազմաթիվ պատճառներ, երբ ոտնձգությունից տուժած անձը ցանկանա կապ հաստատել իրավախախտի հետ կամ չխանգարի նրան այցելել իր բնակարանը, օրինակ՝ վախի պատճառով:

Ի՞նչ է լինում իրավախախտի չհամաձայնելու դեպքում:

15. Ն Արդյունավետ կատարողականն ապահովելու նպատակով ներպետական օրենսդրությամբ կարող են նախատեսվել տարբեր միջոցներ: Մասնավորապես, կարող է պահանջվել կասկածյալի կամ իրավախախտի համաձայնությունը և համագործակցությունը, կամ սահմանվեն կանխարգելիչ միջոցներ: CM/Rec (2014) 4

Անշուշտ, եթե իրավախախտը համաձայն լինի կրել էլեկտրոնային ապարանջանը, կիրառված որոշման կատարումը և դրա պահանջները պահպանելու նկատմամբ հսկողությունը ավելի արդյունավետ կլինի: Իսկ եթե իրավախախտը հրաժարվում է կրել սարքը, պետք է գնահատել ոտնձգությունից տուժած անձի համար վտանգը, որպեսզի որոշում կայացվի՝ իրավախախտին զրկել ազատությունից կամ կիրառել այլընտրանքային կանխարգելիչ միջոցներ:

Պորտուգալիայում 112/2009 օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է իրավախախտի, ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի հետ համատեղ բնակվող ցանկացած այլ անձի կողմից հսկողության կիրառման համար համաձայնություն տալու կարգը: Այս հոդվածը և 33/2010 օրենքի 4-րդ հոդվածը մանրամասնում են էլեկտրոնային հսկողության համաձայնության ընթացակարգային պահանջները: Կարևոր գործոններն են.

- ✓ Իրավախախտը համաձայնությունը տալիս է դատավորի առջև անձամբ ՝ պաշտպանի ներկայությամբ, և այն փաստաթղթավորվում է:
- ✓ Էլեկտրոնային հսկողության ենթարկվելու համար իրավախախտի կամ դատապարտյալի կողմից դիմելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված այդ մասին դիմումում պարզ շարադրանքով ներկայացված լինելու միջոցով:
- ✓ Իրավախախտի կամ դատապարտյալի հետ համատեղ բնակվող 16 տարեկանից բարձր անձինք, , նույնպես դիմումում պարզ շարադրանքով ներկայացնում են իրենց համաձայնությունը, որը ցվում է սոցիալական վերահնտեգրման ծառայությունների կողմից հավաքված տեղեկատվությանը և ուղարկվում մինչ որոշում կայացնելը, իսկ հետագայում ուղարկվում է դատավորին:
- ✓ Համաձայնությունն անձի կողմից կարող է ցանկացած պահի չեղարկվել:

14-րդ հոդվածի «ա» կետը սահմանում է, որ եթե իրավախախտը կամ դատապարտյալը հրաժարվում է իր տված համաձայնությունից, էլեկտրոնային հսկողություն սահմանող որոշումն ուժը կորցնում է:

Իսպանիայում նույնպես պահանջվում է և՛ ոտնձգությունից տուժած անձի, և՛ իրավախախտի համաձայնությունը:[30]

Ի տարբերություն դրա, **Վրաստանում** ոստիկանությունը իրավասու է անձին կանչել ՆԳՆ լիազոր մարմին՝ էլեկտրոնային սարքը միացնելու, չներկայանալու դեպքում որոնել և կիրառել համապատասխան հարկադրանքի միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային սարքը իրավախախտին կցելու նպատակով (թիվ 126 որոշում, հոդված 3(9)-(11)): Այս մոտեցման հետևանքները պետք է գնահատվեն, քանի որ ոտնձգությունից

[30] Իսպանիա, 2013թ. արձանագրություն, կետ 1.1.3:

տուժած անձի համար այն կարող է հանգեցնել ավելի մեծ վտանգի և հանգեցնի կիրառվող միջոցի ավելի ցածր արդյունավետության: Բռնության վտանգի առկայության, կամ սարքը կրելուց հրաժարվելու դեպքում, իրավախախտը զրկվում է ազատությունից կամ կիրառվում են ռիսկը նվազեցնող այլ սահմանափակող միջոցներ:

Էլեկտրոնային հսկողության իրականացման սահմանները

Ընտանեկան բռնության դեպքերում էլեկտրոնային հսկողությունն օգտագործվում է միայն ոտնձգությունից տուժած անձի կյանքին վտանգի սպառնալիքի և բռնության կրկնման հավանականության գնահատումից հետո:

Որպեսզի պետական մարմինները կարողանան իմանալ, թե ընտանեկան բռնության ենթարկված անձի կյանքի առումով արդյոք առկա է իրական և անմիջական վտանգ, պետք է իրականացվի ինքնուրույն, նախաձեռնող բնույթ կրող և համապարփակ գնահատում:[31] Ընտանեկան բռնության կամ կանանց նկատմամբ բռնության վտանգի առկայության հարցում պետական մարմիններից պահանջվում է անհապաղ արձագանք և պատշաճ ջանասիրություն՝ բռնության կոնկրետ դրսևորումը վերացնելու համար:[32]

Վրաստանում էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառման շեմը կապված է **իրավախախտի կողմից բռնության կրկնման իրական սպառնալիքի** և ոտնձգությունից տուժած անձի կամ նրա օրինական/դատավարական ներկայացուցչի էլեկտրոնային հսկողության իրականացմանը համաձայնություն տալու հետ: Բռնության կրկնման վտանգը գնահատվում է ոստիկանության լիազորված ծառայողի կողմից՝ համապատասխան սահմանափակող որոշման կիրառման ընթացակարգով կանոնակարգված ռիսկի գնահատման հարցաթերթիկի միջոցով:[33]

Պորտուգալիայում էլեկտրոնային հսկողության կիրառման համար դատարանը պետք է որոշի, որ «այն էական նշանակություն ունի ոտնձգությունից տուժած անձի պաշտպանության համար»:[34]

Ուշադրության կենտրոնում պետք է լինեն ոտնձգությունից տուժած անձին սպառնացող վտանգը և նրա պաշտպանությունն ապահովելու կարիքները: Այլապես, բռնության կրկնման վտանգին առաջնահերթություն տալը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ պաշտպանություն հնարավոր չլինի ապահովել այն անձի համար, ով նախկինում բռնության չի ենթարկվել:

Ռիսկերի բազմակողմանի գնահատում

Ստամբուլյան կոնվենցիայի 51-րդ հոդվածը և բացատրական զեկույցը հստակեցնում են, որ **ընտանեկան բռնության դեպքերում ցանկացած միջամտության հիմքում պետք է ընկած լինեն ոտնձգությունից տուժած անձի անվտանգության հետ կապված մտահոգությունները ,** և իշխանություններից պահանջվում է յուրաքանչյուր նման դեպքի համար արդյունավետորեն գնահատել և մշակել ոտնձգությունից տուժած անձի անվտանգությանը սպառնացող ռիսկերը կառավարելու ծրագիր: Ռիսկերի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել հնչեցված սպառնալիքները, իրավախախտի կողմից գործադրված բռնության նախորդ դեպքերը, բռնության կրկնման հավանականությունը, ներառյալ ոտնձգությունից տուժած անձի կյանքին սպառնացող վտանգը և իրավիճակի

[31] *Kurt-ն ընդդեմ Ավստրիայի*, [2021թ.] ՄԻԵԴ 508 (Մեծ պալատ), կետ168:
[32] *Tkhelidze-ն ընդդեմ Վրաստանի* [2021թ.] ՄԻԵԴ 614 (Մեծ պալատ), կետ 48:
[33] Վրաստան, 2020թ, թիվ 126 որոշում, հոդված 3(2):
[34] Պորտուգալիա, 112/2009 օրենք, հոդված 35 (3):

լրջությունը, այդ թվում՝ իրավախախտի մոտ զենքի առկայությունը: Բռնության կրկնման ռիսկը գնահատելու և կառավարելու համար ձեռնարկված յուրաքանչյուր միջոց կիրառելիս պետք է նաև երաշխավորվի իրավախախտի իրավունքների նկատմամբ հարգանքը: Ձեռնարկված միջոցները չպետք է հանգեցնեն կրկնազոհականացում կամ հանգեցնեն ոտնձգությունից տուժած անձի կրած վնասի ավելացման:[35]

Պետք է ընդգծել, որ իրավախախտի ժամանակավոր անկարողությունը՝ օգտվելու սեփականության և անձնական և ընտանեկան կյանքի իր իրավունքից, չի կարող գերակա դիտվել ոտնձգությունից տուժած անձի կյանքի և ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության իրավունքիցը:[36] Առաջնահերթությունը պետք է տրվի ոտնձգությունից տուժած անձի և նրա երեխաների անվտանգությանը:

Զգուշացում.
Նույնիսկ եթե ռիսկերի գնահատման գործընթացը և դրանց փաստաթղթավորումը հուսալի է կազմակերպված, չի բացառվում, որ կայացված որոշումների կիրառումը կարող է հանգեցնել կանանց պաշտպանության հետ կապված խնդիրների: Անհրաժեշտ է նաև ապահովել, որ ոտնձգությունից տուժած անձի համար բարձր վտանգ չներկայացնող իրավախախտները չենթարկվեն էլեկտրոնային հսկողությամբ և էլեկտրոնային ապարանջան կրելու հետ կապված խիստ սահմանափակումներին:

Իսպանիայում բռնության ռիսկի մակարդակը գնահատելու համար օգտագործվում է երկու միջոց:
Առաջինը՝ բացահայտվում է բռնության կրկնման հավանականությունը: Ոստիկանության ծառայողը ձևաթղթում նշում է ստացված տեղեկատվության աղբյուրը և գնահատում ռիսկի մակարդակը՝ ծայրահեղ բարձր, բարձր, միջին և ցածր: Եթե ձևաթուղթը լրացնող ոստիկանության ծառայողը կարծում է, որ ռիսկի մակարդակը չի համընկնում ձևաթղթով ավտոմատ ձևով հաշվարկվող ռիսկի աստիճանի հետ, ապա նա կարող է ավելի բարձր ռիսկի աստիճան նշել: Ռիսկը նվազեցնել նա չի կարող: Ռիսկի յուրաքանչյուր մակարդակի համար նախատեսված են ժամկետներ, որի ընթացքում ռիսկը պետք է վերագնահատվի՝

- ✓ Չափազանց բարձր = 72 ժամ
- ✓ Բարձր = 7 օր
- ✓ Միջին = 30 օր
- ✓ Ցածր = 60 օր

Դատարանի որոշմամբ պաշտպանական միջոցներ կիրառելուց հետո օգտագործվում է երկրորդ ձևաթուղթը՝ սահմանված ժամկետներում ռիսկի հնարավոր սրումը մշտադիտարկելու համար:

ԳՐԵՎԻՈ-ի ելակետային զեկույցում[37] էլեկտրոնային ապարանջանի օգտագործումը ճանաչվել է որպես ցանկալի մոտեցում, սակայն նաև նշվել է, որ Իսպանիայի իշխանությունների կողմից հավաքված տվյալները ցույց են տվել, որ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից սպանված կանանց զգալի տոկոսը համալիր հսկողության գործիքակազմի միջոցով գնահատման արդյունքում համարվել է ցածր ռիսկային գոտում գտնվող, կասկած առաջացնելով, թե արդյոք անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների խախտումներին բավական լուրջ են վերաբերվել:

---

[35] Ստամբուլյան կոնվենցիայի հոդված 51, Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, 260-263 կետեր:
[36] Տե՛ս Yildirum-ն ընդդեմ Ավստրիայի, Հաղորդակցություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, կետ 12:1:5, 2005թ. որտեղ նշված է, որ «իրավախախտի իրավունքները չեն կարող գերազանցել կանանց կյանքի և ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության իրավունքները»:
[37] ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց, GREVIO/Inf(2020)19

Լրացուցիչ նյութեր

- ✓ EIGE (Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ) Ռիսկերի գնահատման և սեռական զուգընկերոջ կողմից բռնության վտանգի կառավարման ուղեցույց՝ https://eige.europa.eu/sites/default/files/documents/20191701_mh0119277enn_pdf.pdf
- ✓ Սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու վտանգի նույնականացման և գնահատման գործիք, 2020 թ. սեպտեմբեր, Բարբրա Շլայֆերի հիշատակի կլինիկա, Օնտարիոյի իրավաբանական հիմնադրամ՝ https://www.schliferclinic.com/wp-content/uploads/2021/10/IPV-RIA-User-Guide-Final-1.pdf
- ✓ ՄԹ, խոցելիության հետ կապված ռիսկերի ուղեցույցների ճանաչում և արձագանքում. ապացույցների վերանայում մաս երկրորդ՝ https://assets.college.police.uk/s3fs-public/2021-11/Recognising-responding-vulnerability-related-risks-Evidence-review-part-2.pdf

Տեղեկատվությունը

Անհրաժեշտ է և՛ ոտնձգությունից տուժած անձին և՛ իրավախախտին հասկանալի լեզվով և ձևով հստակ տեղեկատվություն տրամադրել իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: (Ստամբուլյան կոնվենցիա, հոդված 19)

Երկու կողմերի համար էլ դա նախատեսում է.

- ✓ Տեղեկատվություն տրամադրում կիրառվող սարքավորումների և տեխնոլոգիայի մասին և, թե ինչպես է աշխատում սարքը:
- ✓ Ինչ կարող են նրանք ակնկալել իշխանություններից:
- ✓ Ահազանգեր կամ այլ ծանուցումներ համակարգից. ե՞րբ են գեներացվում զգուշացումները: Ինչ է դա նշանակում ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի համար: Ինչպե՞ս են արձագանքում իշխանությունները:
- ✓ Որո՞նք են արգելված գոտիները և պահանջը խախտելու դեպքում իրավախախտի համար ինչ հետևանքներ կառաջանան :
- ✓ Ինչ անել սարքերի անսարքության կամ ցանկացած այլ խնդրի դեպքում, որը կարող է ազդել հսկողության սարքերի կամ դրանց շահագործման վրա, օրինակ՝ էլեկտրաէներգիայի մատակարարման կամ հեռախոսի/ինտերնետ կապի խափանում:
- ✓ Ինչ անել հսկողության ժամանակահատվածի ավարտից հետո:

Ոտնձգությունից տուժած անձի համար.

- ✓ Ոտնձգությունից տուժած անձին պետք է ներկայացվենհսկողության կիրառման սահմանափակումները և նույնիսկ մտադիտարկման պարագայում պահպանվող վտանգները, և ոտնձգությունից տուժած անձը պետք է հասկանա այդ սահմանափակումները, որպեսզի նրա մոտ չստեղծվի անվտանգության կեղծ զգացում:[38]
- ✓ Երեխայի ներգրավվածության դեպքում տեղեկատվությունը երեխային տրվում է վերջինիս համար հասանելի ձևով և հնարավորության դեպքում ծնողի կամ խնամակալի օժանդակությամբ: Երեխաները պետք է հասկանան, թե ինչու չեն կարող մոտենալ իրենց ծնողին կամ ինչ անել, եթե ահազանգի սարքը միանա:

Իրավախախտի համար.

- ✓ Ինչ նա կարող է անել և ինչն է արգելված:
- ✓ Ո՞վ է լիազորված իրեն պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալ:

[38] Ibarra P. Gur O. and Erez E. (2023)

- ✓ Ինչպես պետք է կատարել համապատասխան ցուցումները և հաղորդակցվել էլեկտրոնային հսկողության համար պատասխանատու անձանց հետ:
- ✓ Ինչպես, երբ և ում հետ կապ հաստատել անկանխատեսելի կամ հրատապ իրավիճակների դեպքում, ինչպիսիք են հիվանդությունը կամ ընտանեկան արտակարգ իրավիճակները:
- ✓ Ինչպես, երբ և ում հետ կապ հաստատել, եթե էլեկտրոնային հսկողության պայմանների փոփոխության համար պահանջվում է թույլտվության ստացում:
- ✓ Ո՞րն է հսկողության ժամանակահատվածում համարվում հարգելի պատճառով բացակայություն:

Վրաստանում կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության կանխարգելման, ոտնձգությունից տուժած անձանց պաշտպանության և աջակցության մասին» օրենքի 10-բիս 1(8) հոդվածի (փոփոխված) և 126 որոշման 3(4) հոդվածի համաձայն ոստիկանության ծառայողը պարտավոր է իրավախախտին և ոտնձգությունից տուժած անձին բացատրել էլեկտրոնային հսկողության իրականացման ընթացքում նրանց իրավունքներն ու պարտականությունները, էլեկտրոնային հսկողության սարքի գործարկման կանոնները և կանոնների խախտման համար պատասխանատվությունը:

Իրավախախտին ոստիկանության բաժին բերելու մասին արձանագրությունը նախատեսում է տարբեր գործոնների փաստաթղթավորում և իրավախախտին դրանց մասին ծանուցում, այդ թվում՝ զեկուցագրի կազմման ամսաթիվը և վայրը, արձանագրության հեղինակի պաշտոնը, անունը և ազգանունը, տեղեկություններ իրավախախտի մասին, ոստիկանության բաժանմունք նրան բերելու ժամանակը և պատճառը: Արձանագրությունը ստորագրվում է արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի և իրավախախտի կողմից: Եթե իրավախախտը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, արձանագրության մեջ այդ մասնին գրառում է կատարվում:

Ձերբակալության մասին արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, որոնցից մեկը տրվում է իրավախախտին, իսկ մյուսը պահպանվում է արձանագրություն կազմող մարմնում: Իրավախախտը տեղեկացվում է փաստաբան ունենալու, ոստիկանություն տանելու մասին հարազատներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքի ու ուսման վայրում այդ մասին տեղեկացնելու իր իրավունքի մասին:

Իսպանիայում ոտնձգությունից տուժած անձանց համար գործում է հատուկ էլեկտրոնային կայք[39], որը բազմաթիվ տեղեկություններ է պարունակում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին: Կայքն ունի «արագ ելքի» կոճակ և հետևյալ հնարավորությունները:

- ✓ Կարճ տեսանյութ ընդհանուր հասանելի պաշտպանության և ավելի երկար տեսանյութ էլեկտրոնային հսկողության համակարգի մասին, որը հասանելի է մի քանի լեզվով՝ ենթագրերի միջոցով:
- ✓ Համապատասխան իրավական կառուցակարգերին հասանելիություն ապահովող էլեկտրոնային հասցեներ:
- ✓ Տարբեր լեզուներով տեղեկատվական թերթիկներ:
- ✓ Էլեկտրոնային հսկողության համակարգի մանրամասն բացատրություն, ներառյալ տեղեկատվություն օգտագործվող տեխնոլոգիայի մասին, ինչպես է այն աշխատում, տարբեր իրադարձությունների տեղադրման և զեկուցման ժամկետները:
- ✓ Ամբողջ տեղեկատվությունը հասանելի է նաև հեշտ ընթերցելի տարբերակով: [40]

[39] Իսպանիա՝ https://violenciagenero.igualdad.gob.es/informacionUtil/recursos/dispositivosControlTelematico/home.htm
[40] Իսպանիա՝ https://violenciagenero.igualdad.gob.es/informacionUtil/recursos/servicioTecnico/ATENPRO_FACIL.pdf

Կիրառումը և ծանուցումը

Մասնակից պետությունները տարբեր մոտեցում են որդեգրել այն հարցում, թե ով է էլեկտրոնային հսկողության մասին որոշում կայացնելու պատասխանատուն՝ ոստիկանությունը թե դատարանը: Եթե անհետաձգելիության նկատառումներից ելնելով որոշումը կայացվել է ոչ թե դատարանի, այլ որևէ այլ մարմնի կողմից, ապա դատարանը այդ որոշման նանդրադառնում է ողջամիտ ժամկետում:

Ապահովել, որ բացի ոստիկանությունից և դատարանից, ոտնձգությունից տուժած անձը, ցանկության դեպքում, նույնպես հնարավորություն ունենա հսկողության որոշում արձակելու հայցով դիմում ներկայացնել:

Պետք է հստակ արձանագրվեն որոշման արձակման պատճառները, սահմանափակումների բովանդակությունը, որոշման ուժի մեջ մտնելու օրվա և ժամը և տևողությունը: Իրավախախտը և ոտնձգությունից տուժած անձը երկուսն էլ պետք է ծանուցվեն որոշման մասին: Կարևոր է, որ հսկիչ կենտրոնն ունենա որոշման և ցանկացած սահմանափակման կիրառման փաստաթղթի պատճենը:

Վրաստանում «Ընտանեկան բռնության մասին» օրենքը 11-րդ հոդվածը սահմանում է, թե ովքեր կարող են դիմել էլեկտրոնային հսկողության ենթարկվելու համար: Մասնավորապես, այդ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը (փոփոխված) ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսում է էլեկտրոնային հսկողություն սահմանելու մասին դիմում ներկայացնելու հնարավորություն:

Էլեկտրոնային հսկողություն իրականացնելու համար լիազորված ոստիկանության ծառայողը կարող է էլեկտրոնային հսկողության նպատակով համապատասխան քայլեր ձեռնարկել:[41] Ոստիկանության ծառայողից պահանջվում է արձանագրությունը գրանցել նախարարության վարչության տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան այն կայացնելուց 12 ժամ հետո: Էլեկտրոնային միջոցներն ակտիվացնելու համար ոստիկանության ծառայողը հեռախոսազանգի միջոցով անհապաղ տեղեկացնում է հսկիչ կենտրոնին: Արձանագրության պատճենն անհապաղ և ոչ ուշ քան 12 ժամվա ընթացքում ուղարկվում է հսկիչ կենտրոն և նախարարության տուժածի բնակության վայրին մոտակա համապատասխան տարածքային մարմին:[42] Հրամանի արձակման մասին արձանագրությունն ուղարկվում է դատարան այն կայացնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, հսկողությունը սկսելու համար դատարանը այն պետք է հաստատի: Դա չկատարելու կամ դատարանի կողմից արձանագրությունը հաստատելուց հրաժարվելու դեպքում էլեկտրոնային հսկողության միջոցը անհապաղ դադարեցվում է:[43] Այդ մոտեցումը թույլ է տալիս կանխել էլեկտրոնային հսկողության որոշման հետաձգումը, միևնույն ժամանակ դատական քննության կարևոր երաշխիքներ է նախատեսում իրավախախտի համար:

Պորտուգալիայում դատարանը նաև հաշվի է առնում ոտնձգությունից տուժած անձի անձնական, ընտանեկան, աշխատանքային կամ սոցիալական վիճակի համատեղելիությունը էլեկտրոնային հսկողության պահանջներին: Սահմանված միջոցի կատարումը սկսվում է ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի մոտ էլեկտրոնային հսկողության միջոցների տեղադրումից (թիվ 33/2010 օրենքի հոդված 26):

[41] Վրաստան, 2006թ. թիվ 20 օրենքի (փոփոխված) 10-բիս 1 (1) հոդված , Թիվ 126 որոշման մեջ նշված իրավասու անձինք:
[42] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 5:
[43] Վրաստան, 2006թ. թիվ 20 օրենքի (փոփոխված) 10-բիս 1 (1) հոդված:

Որոշման գործողության ժամկետը

Էլեկտրոնային հսկողության ժամկետը պետք է հստակորեն սահմանվի և ապահովվեն համապատասխան պարբերականությամբ դրան անդրադառնալու մեխանիզմները:

Վրաստանում էլեկտրոնային հսկողության ժամկետը չի գերազանցում սահմանափակում նախատեսող միջոցի գործողության տևողությունը:[44]

Իսպանիայում սարքը հեռացնելու համար պահանջվում է դատական որոշում, իսկ հեռացումը սովորաբար տեղի է ունենում դատարանում:[45]

Համակարգի տեխնիկական առանձնահատկությունները

Տեխնոլոգիական ռիսկերը

28. Էլեկտրոնային հսկողության կանոնները պետք է պարբերաբար վերանայվեն՝ ոլորտի տեխնոլոգիական զարգացումները դրանցում հաշվի առնելու համար, ինչը թույլ կտա խուսափել կասկածյալների, իրավախախտների և այլ անձանց անձնական և ընտանեկան կյանք անհարկի ներխուժումից: CM/Rec(2014)42012

Մասնագիտական գրականության մեջ լուսաբանվել են տեխնոլոգիական զանազան խնդիրները և ձախողումները: Տարբեր գործոնները, այդ թվում՝ սարքավորումների անսարքությունը, ազդանշանի կորուստը, էներգամատակարարման կամ մարտկոցի խափանումը, տվյալների բազաների միջև կապի բացակայությունը և լայնաշերտ կապի անբավարար հզորությունը, կարող են խոչընդոտել էլեկտրոնային հսկողության համակարգերի հաջող ներդրմանը:[46] Օրինակ՝ GPS հսկողության համակարգերը կարող են չաշխատել ստորգետնյա տրանսպորտում:[47] Էլեկտրոնային հսկողության սարքերի և համակարգերի բարդ տեխնոլոգիայի պատճառով կարող են առաջանալ կեղծ ահազանգեր:[48] Այդուհանդերձ, ընդհանուր տեսակետն այն է, որ վերջին տարիների ընթացքում տեղի է ունեցել տեխնոլոգիայի բարելավում:[49]

Տեխնոլոգիական հաճախակի ձախողումները կարող են հանգեցնել հսկիչ կենտրոնի և ոստիկանության անձնակազմի մոտ կարծիքի, որ ահազանգը կեղծ է, և իրական խախտում տեղի ունենալու դեպքում քայլեր չեն ձեռնարկվի:[50] 2014-2017 թվականներին Միացյալ Թագավորությունում անցկացված աղմկալի դատավարությունից հետո ոստիկանության ծառայությունը հանգեց այն մտքին, որ էլեկտրոնային հսկողության համար ապագայում նախընտրելի կլինի համակարգի շահագործման նպատակով համակարգը գնելու փոխարեն վարձակալության պայմանագիր կնքել մասնավոր ընկերության հետ, ինչը թույլ կտա պայմանագրում դրույթ նախատեսել տեխնոլոգիայի առաջընթացին զուգահեռ սարքերը արդիականացնելու մասին :[51]

Կարևոր է պատշաճ կերպով բացահայտել, գնահատել և կառավարել բոլոր տեխնոլոգիական ռիսկերը:

---

[44] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 3(3):
[45] Իսպանիա, 2013թ. արձանագրություն:
[46] Belur, J. et al (2020):
[47] Otero (2009) էջ. 142, ծանոթագրություն 13:
[48] Martinovic, M. Schluter, P. (2012):
[49] Շոտլանդիայի կառավարություն (2019):
[50] Belur, J. et al (2020):
[51] Շոտլանդիայի կառավարություն (2019), էջ 62:

Սարքերը

Ոտնձգությունից տուժած անձանց պետք է առաջարկել միայն շարժական ընդունիչ սարքեր (իրավախախտի որսիչից ազդանշան ստանալու համար) և նրանց երբեք չստիպել թրեքեր կրել: Եթե իրական ժամանակում գտնվելու վայրի տվյալները ցույց են տալիս, որ իրավախախտը և ոտնձգությունից տուժած անձը մոտենում են միմյանց (մինչև նրանք միմյանց հետ տեսողական կապ ունենան), ապա առաջին հերթին պահանջվում է ոստիկանական աջակցության հրատապ տրամադրում ոտնձգությունից տուժած անձին և միայն երկրորդ հերթին իրավախախտի հայտնաբերում և միջամտության դրսևորում (թեև երկուսն էլ կարելի է միաժամանակ կատարել): Պետք է ուշադիր լինել, որ իրավախախտը պատահաբար չիմանա մոտակայքում ոտնձգությունից տուժած անձի գտնվելու մասին, եթե նա այդ մասին տեղյակ չէ, և նրան թույլ չտալ մտնել այդ տարածք կամ ոտնձգությունից տուժած անձի բնակության նոր վայր:[52]
Standards and Ethics in Electronic Monitoring: Handbook for professionals responsible for the establishment and the use of Electronic Monitoring, Nellis. M, Council of Europe 2015 (Էլեկտրոնային հսկողության չափանիշներ և էթիկա. էլեկտրոնային հսկողության համակարգերի ներդրման և օգտագործման համար պատասխանատու մասնագետների համար նախատեսված ձեռնարկ):

Հսկիչ «ապարանջան»

Տեխնիկական սարքավորումներին ներկայացվող նվազագույն չափանիշները սովորաբար սահմանվում են օրենսդրությամբ:

Պորտուգալիայում սարքավորումների ընդհանուր տեխնիկական բնութագրերը սահմանված են թիվ 26/2001 որոշմամբ:[53]

Սարքավորումը.

- ✓ անխափան օգտագործման համար ամրացվում է աձի կոճին կամ դաստակին.
- ✓ ոչ մի դեպքում չպետք է վտանգի ենթարկի անհատի առողջությունն ու անվտանգությունը.
- ✓ չպետք է սահմանափակի անձի համար թույլատրված գործունեությունը.
- ✓ ստացողին տվյալներն ուղարկում է անլար կապով.
- ✓ անմիջապես ընդհատում է ազդանշանը՝ սարքի վնասվելու կամ հեռացնելու դեպքում.
- ✓ գործում է առանց արտաքին սնուցման աղբյուրի.
- ✓ ցնցակայուն, անջրանցիկ և հիպոալերգեն է:

Նմանապես, **Վրաստանի** թիվ 126 հրամանի 6-ից 8-րդ հոդվածներում նախատեսված են մի շարք տեխնիկական բնութագրեր, որոնք սահմանում են, թե որտեղ է ամրացվում էլեկտրոնային ապարանջանը (սրունքին, իսկ եթե դա անհնար է, դաստակին), որ այն չի կարող հանվել առանց վնասվելու, անջրանցիկ է և կարող է դիմակայել ջերմաստիճանի ծայրահեղ տատանումներին (-25-ից +50 աստիճան Ցելսիուս):[54]

Այս ընդհանուր հատկանիշները արտացոլված են **Իսպանիայի** 2013 թվականի արձանագրության հավելվածում:

[52] Nellis M. (2015) էջ. 41:
[53] Diário da República n.º 12/2001, Series IB of 2001-01-15 , 228 – 229 էջեր, https://dre.pt/dre/detalhe/portaria/26-2001-337579:
[54] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 6:

«Ապարանջանի» ամրացումը

Սովորաբար կանոնակարգերը սահմանում են, թե երբ, որտեղ և ինչպես է կցվում ապարանջանը: Դա պարտադիր է, քանի որ հակառակ դեպքում կարող է համարվել, որ ապարանջան ամրացնողը ոտնձգություն է կատարում:

Իսպանիայում 2013 թվականի արձանագրության 1.2.2 կետում նշվում է, որ ապարանջանի տեղադրումը տեղի է ունենում դատարանում, դրա մասին ծանուցելուց հետո և տեղադրող ընկերության և դատական մարմնի միջև համաձայնեցված ժամկետում, կազմվում է գրավոր արձանագրություն, որ անձին տրամադրվել է սարքը և օգտագործողի ուղեցույցը, ինչպես նաև բացատրվել են շահագործման և պահպանման հիմնական կանոնները:

Վրաստանում հասարակական անվտանգության ապահովման «112» հսկիչ կենտրոնը էլեկտրոնային սարքերը հանձնում է համապատասխան անվտանգության պաշտոնյային, որն այնուհետև դրանք տրամադրում է ոստիկանության լիազորված ծառայողին: Սարքի հատկացման և վերադարձի յուրաքանչյուր դեպքի գրանցումը պարտադիր է:[55] Իրավախախտի մարմնին ամրացվում է ապարանջանը, ընդ որում իրավախախտին և ոտնձգությունից տուժած անձին տրվում է ընդունիչ սարք: Իրավախախտի ընդունիչն ունի 2 տարբեր բջջային օպերատորների SIM քարտեր, որոնցից մեկը ակտիվ է, իսկ երկրորդը՝ պահեստային: Սարքի ծախսը հոգում է հասարակական անվտանգության ապահովման կառավարման 112 կենտրոնը: Էլեկտրոնային հսկողության ապարանջանը կցելու նպատակով բերման ենթարկելը թույլատրվում է, սակայն բերման ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 6 ժամը:[56]

Ընդունիչ սարք

Ընդունիչ սարքը և՛ իրավախախտի, և՛ ոտնձգությունից տուժած անձի համար հիմնականում նույնն է, սակայն երկու սարքերը կարող են տարբեր գործառույթներ նախատեսել:

Պորտուգալիայում հսկողության ցանկացած շարժական մեխանիզմ պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.[57]

- ✓ լինի թեթև և հեշտ օգտագործման համար.
- ✓ օգտագործի անլար կապ՝ DIP և UML ազդանշաններ ստանալու համար.
- ✓ հնարավորություն ունենա հիշողության սարքում պահելու փոխանցման հաղորդումներըև գրանցելու դրանց ամսաթիվն ու ժամը.
- ✓ տվյալները փոխանցի համակարգչին.
- ✓ ունենա մարտկոցով աշխատելու հնարավորություն.
- ✓ թույլ տա հայտնաբերել և գրանցել անձնական նույնականացման սարքի կամ տեղում գործող հսկիչ սարքի խախտումների ազդանշանները:

Իսպանիայում ինչպես իրավախախտին, այնպես էլ ոտնձգությունից տուժած անձին տրվում են 2Track մոդելի սարքերը: Ոտնձգությունից տուժած անձին տրվում է GPS շարժական ազդանշանային սարք, որն ապահովում է ձայնային տեսողական և/կամ վիբրացիոն ազդանշան, երբ իրավախախտի հաղորդիչը գտնվում է սահմանված տիրույթում: Եթե ոտնձգությունից տուժած անձի սարքի վրա հայտնվում է իրավախախտի հաղորդիչի ռադիոհաճախականության ազդանշանը, ոտնձգությունից տուժած անձը ահազանգ է ուղարկում հսկիչ կենտրոն: Արտակարգ իրավիճակում ոտնձգությունից տուժած անձը կարող է օգտագործել տագնապի կոճակը՝ ելքային զանգ ուղարկելու համար

[55] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 4:
[56] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 3(9):
[57] Պորտուգալիա, 2006թ, թիվ 26 որոշման 7–րդ հոդված:

նախապես սահմանված շտապ օգնության համարին:[58] Տեղադրող ընկերությունն առաքում և տեղադրում է ընդունիչ սարքը ոտնձգությունից տուժած անձի բնակարանում: Եթե դա հնարավոր չէ, սարքը տրամադրվում է դատարանում կամ ոստիկանական ամենահարմար բաժանմունքում: Ոտնձգությունից տուժած անձի սարքի տեղադրումը միշտ նախորդում է իրավախախտի սարքի տեղադրմանը: Տեղադրող ընկերությունը բացատրում է շահագործման և պահպանման հիմնական կանոնները և տրամադրում է օգտագործման և սպասարկման ուղեցույց: Այնուհետև ոտնձգությունից տուժած անձը գրավոր հաստատում է այդ փաստը և այն, որ նա համաձայնություն է տվել անձնական տվյալների կանոնակարգով նախատեսված տվյալների օգտագործմանը: Վերոնշյալ դրույթները վերացնում են գործընթացին ոտնձգությունից տուժած անձի մասնակցության խոչընդոտը:

Իրավախախտի ընդունիչ սարքը

Իրավախախտի՝ արգելված գոտուն կամ ոտնձգությունից տուժած անձին մոտենալը հսկելու համար պահանջվում է հատուկ սարք: Սահմանված հանգամանքներում սարքը պետք է տագնապի ազդանշան արձակի, գործի ինչպես GPS, այնպես էլ բջջային համակարգերում, և կատարի որոշ անցանց գործառույթներ՝ տվյալների կորստի դեպքում իրավախախտին զգուշացնելու համար:

Վրաստանում թիվ 126 որոշման 7-րդ հոդվածի համաձայն[59] իրավախախտին տրվող սարքը.

- ✓ Վերահսկում է իրավախախտի մոտեցնալը ոտնձգությունից տուժած անձին/ոտնձգությունից տուժած անձի աշխատավայրին, տանը և այլ արգելված տարածքին:
- ✓ Հագեցած է 24 ժամ աշխատող մարտկոցով: Իրավախախտի ընդունիչ սարքը մարտկոցը լիցքավորելու համար պետք է պարբերաբար միացվի հոսանքի աղբյուրին:
- ✓ Ունի երկու տարբեր բջջային օպերատորների SIM քարտեր: Դրանցից մեկ SIM քարտը ակտիվ է, իսկ մյուսը ծառայում է որպես պահեստային քարտ: Սարքի ծախսը հոգում է հասարակական անվտանգության ապահովման կառավարման 112 կենտրոնը:
- ✓ Հնարավորություն է տալիս կապ հաստատել իրավախախտի հետ: Ընդունիչ սարքը կարող է միանալ միայն երկու կանխորոշված հեռախոսահամարների: Դրանք են՝ «112» միասնական շտապ օգնության հեռախոսահամարը և հսկիչ կենտրոնի համապատասխան համարը՝ 2-41-81-12:
- ✓ Ծանուցում է իրավախախտին ահազանգման գոտի մուտք գործելու մասին, նույնիսկ եթե էլեկտրոնային հսկողության համակարգի հետ կապը կորել է: Հաղորդագրությունն արտացոլվում է իրավախախտի էլեկտրոնային սարքի էկրանին նախապես կազմված տեքստի տեսքով: Էլեկտրոնային սարքը նաև հաղորդակցվում է իրավախախտի հետ՝ օգտագործելով տագնապի ազդանշան և վիբրացիա:

Ոտնձգությունից տուժած անձի ընդունիչ սարքը

Ոտնձգությունից տուժած անձի համար նախատեսված սարքը հաշվարկում է իր և իրավախախտի միջև տարածությունը և ունի տագնապի կոճակ, որն արտակարգ իրավիճակներում հնարավորություն է տալիս նրան կապվել հսկիչ կենտրոնի հետ:

[58] Իսպանիա, 2013թ. արձանագրություն, Հավելված 1:
[59] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 7:

Վրաստանում թիվ 126 որոշման 8-րդ հոդվածի համաձայն ոտնձգությունից տուժած անձին տրվող սարքը.

- ✓ Հաշվարկում է ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի միջև հեռավորությունը և տագնապի ազդանշանի միջոցով ոտնձգությունից տուժած անձին տեղեկացնում իրավախախտի մոտենալու մասին՝ ըստ 2 աշխարհագրական գոտիների պարամետրերի (արգելված գոտիների մասին տե՛ս ստորև):
- ✓ Ունի օգնության (SOS) կոճակն ակտիվացնելու գործառույթ: Երբ SOS կոճակը միանում է, էլեկտրոնային հսկողության համակարգ տագնապի ազդանշան է ուղարկվում:
- ✓ Համապատասխանում է մարտկոցների, SIM քարտերի, կապի և ծանուցման նույն ընդհանուր պահանջներին, ինչ իրավախախտի սարքը (տես վերևում):

Արգելված գոտիները

19. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային հսկողությունը ենթադրում է որոշակի գոտիներ այցելելու արգելք կամ սահմանափակում, պետք ապահովել, որ դրանք չխոչընդոտեն անձի՝ համայնքում առօրյա կյանքի ողջամիտ որակը: CM/Rec (2014) 4

Գյուղական վայրերում և ընդհանուր տարածք ունեցող փոքր համայնքներում դա կարող է հանգեցնել ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի պատահական հանդիպման ավելի մեծ հավանականության: Ավելի մեծ տարածքներ ունեցող վայրերում արգելված գոտիները պետք է բավականաչափ մեծ լինեն, որպեսզի ոստիկանության ծառայողները արտակարգ իրավիճակների դեպքում կարողանան այցելել դրանք, սակայն արգելված տարածքը համաչափ պետք է լինի նաև իրավախախտից եկող վտանգին:[60]

Վրաստանում սահմանված է երկու աշխարհագրական տարածք: Առաջինը տագնապի գոտին է, որը սահմանված է ոտնձգությունից տուժած անձի գտնվելու վայրից, նրա բնակության վայրից, աշխատավայրից և ըստ անհրաժեշտության այլ վայրերից 100 մետր շառավղով հեռավորության վրա: Երկրորդը բուֆերային գոտին է, որը սահմանված է տագնապի գոտու շուրջ 500 մետր շառավիղով հեռավորության վրա: Ֆիքսված գոտին ներառում է նախանշված վայրերի շուրջ օբյեկտները՝ արձանագրության մեջ նշված տունը, դպրոցը, աշխատավայրը: «Դինամիկ» նախազգուշացման/բուֆերային գոտին ձևավորվում է ըստ ոտնձգությունից տուժած անձի տեղաշարժի տարածքի: Ֆիքսված գոտի մուտք գործելը կարող է լինել դիտավորյալ կամ պատահական: Բուֆերային գոտի մուտք գործելը նախատեսված է ոտնձգությունից տուժած անձին ավելի դինամիկ կերպով պաշտպանելու համար, և իրավախախտը միշտ չէ, որ տեղյակ է այդ մասին:[61]

Երկու տեսակի արգելված գոտիների դեպքում, խախտման նկատմամբ կարող է պահանվել երկու տարբեր մոտեցում:

Ֆիքսված գոտի

Իրավախախտի սարքը տեղեկացնում է նրան, որ նա մտել է ֆիքսված գոտի: Նման դեպքում լիազորված աշխատակիցը նրան նախազգուշացնում է հեռանալ տարածքից և հիշեցնում արգելված տարածքից չհեռանալու հետևանքների մասին:
Եթե իրավախախտը չի լքում տարածքը, խախտումն արձանագրվում է, և հսկիչ կենտրոնը տեղեկատվություն է ուղարկում համապատասխան դատական կամ դատախազական մարմնին:

[60] Nellis M. (2015) , p41
[61] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 16:

Դինամիկ բուֆերային գոտի

Եթե իրավախախտը պատահաբար մտնում է դինամիկ բուֆեր/տագնապի գոտին հանրային տարածքում, իրավասու աշխատակիցը կապվում է իրավախախտի հետ և հրահանգում է լքել բուֆերային/տագնապի գոտին՝ իրավախախտի և ոտնձգությունից տուժած անձի հնարավոր պատահական հանդիպումը կանխելու համար: Պահանջը չկատարելը հանգեցնում է քրեական պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ ոտնձգությունից տուժած անձը և իրավախախտը պատահաբար կարճ ժամանակում մոտեցել են բուֆերային/նախազգուշական գոտուն, որից անհնար էր խուսափել օբյեկտիվ հանգամանքների բերումով:[62]

Հսկողության պայմանների խախտում

Հսկիչ կենտրոն

Հսկիչ կենտրոնը պատասխանատու է համապատասխան հրամանի կատարման հսկողության, խախտման կամ տեխնիկական խափանումների դեպքում իրավախախտի հետ կապ հաստատելու և ոտնձգությունից տուժած անձին զգուշացնելու համար:

Անձնակազմը պետք է համապատասխան պատրաստվածություն ունենա և ներդրվեն բավարար գործառնական երաշխիքներ, ապահովվեն տեխնիկական և տվյալների պաշտպանության միջոցներ՝ համակարգի հուսալիությունն ու տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համար:

(տես նաև տվյալների անվտանգության և պաշտպանության բաժինը)

Պորտուգալիան գործառնական երաշխիքներ է սահմանել հսկիչ կենտրոնի համար: Մասնավորապես՝

- ✓ Հսկիչ կենտրոնում տեղադրվող համակարգը և համապատասխան համակարգչային ծրագրերը պետք է հնարավորինս պաշտպանված լինեն խափանումներից՝ տեղեկատվության պահպանման և պահեստավորման համակարգերի կիրառմամբ՝ հսկիչ կենտրոնի աշխատանքի ընդհատումներից խուսափելու համար:
- ✓ Հսկիչ կենտրոնում տեղադրվող համակարգչային հավելվածները ապահովում են հետևյալը.
- ✓ Տեղում գործող հսկիչ սարքի կոնֆիգուրացիան հսկիչ կենտրոնից՝ գտնվելու ժամանակահատվածները և հսկիչ կենտրոնի հետ կապ հաստատելու հաճախականությունը հաստատելու կամ փոխելու նպատակով:
- ✓ Տեղում գործող հսկիչ սարքի ամբողջ տեղեկատվության անխափան գրանցում տվյալների բազայում:
- ✓ Օպերատորի կողմից հսկողության գործընթացի վերաբերյալ տեքստային ռեժիմով տեղեկատվության ներմուծման հնարավորություն:
- ✓ Հսկողության գործընթացի վերաբերյալ զեուցագրերի ավտոմատ գեներացում:
- ✓ Հսկիչ կենտրոնում տեղադրվում են հետևյալ սարքերը.
- ✓ Համակարգիչներ, տպիչներ և այլ համակարգչային սարքավորումներ
- ✓ Մոդեմներ, ֆաքսեր և այլ սարքավորումներ տեղում գործող հսկիչ սարքի և կառավարման այլ կետերի հետ կապի համար
- ✓ Անխափան սնուցման աղբյուրի (UPS) պահեստային մարտկոց

[62] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 16:

Վրաստանում միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի կենտրոնը տեղակայվի տեխնիկապես հագեցած տարածքում և շուրջօրյա աշխատանք իրականացնի: Կենտրոնի գործառույթները ներառում են տեքստային հաղորդագրությունների ուղարկում իրավախախտի և ոտնձգությունից տուժած անձի ընդունող սարքերին:[63]

Խախտումների տեսակները

Հսկիչ կենտրոնը իրականացնում է շուրջօրյա ծառայություն շաբաթվա բոլոր օրերին: Հսկիչ սարքից գեներացվող ահազանգը անմիջապես ուղարկվում է հսկիչ կենտրոն Կենտրոնը հրահանգներ է արձակում ահազանգը ստանալուց ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ:

Վերահսկվող խնդիրների թվում են.

- **Տեխնիկական խափանումներ.**
  - Սարքերի վնասում/խաթարում.
  - Միացման ձախողումներ, ներառյալ GPS ծածկույթի տարածքը լքելու պատճառով կամ տեղեկատվության պահեստայվորման գործընթացի.
  - Մարտկոցի պիտանելիության ժամկետը/լիցքավորման մակարդակը.
  - Բջջային կապի մակարդակը.

Սարքավորումը կարող է խափանվել մի քանի պատճառով, օրինակ՝ պատահարի կամ ոտնձգությունից տուժած անձի կամ իրավախախտի վերահսկողությունից դուրս խնդիրների պատճառով: Մարտկոցը կարող է լիցքաթափվել, ամրացվող ապարանջանը կարող է կոտրվել, ոտնձգությունից տուժած անձը կարող է կորցնել իր սարքը: Իրավախախտը կարող է միտումնավոր վնասել սարքավորումը, հեռացնել այն կամ այլ կերպ դադարեցնել դրա աշխատանքը:

- **Արգելված գոտիների խախտում՝ ինչպես ֆիքսված, այնպես էլ դինամիկ**

Արգելված ֆիքսված գոտի մուտքն տեղի է ունենում միտումնավոր՝ ոտնձգությունից տուժած անձին հետապնդելու նպատակով կամ պատահաբար, օրինակ՝ եթե իրավախախտը մոռանում է գոտու սահմանները կամ չգիտի, թե որոնք են դրանք (օրինակ՝ գտնվելով խմիչքի կամ թմրանյութերի ազդեցության տակ կամ որպես մեքենայի ուղևոր): Դինամիկ գոտու խախտումը կարող է պատահական լինել, օրինակ, եթե ոտնձգությունից տուժած անձը գտնվում է ապահով տանը կամ ապաստանում, իրավախախտը կարող է չիմանալ, որ նա գտնվում է մոտակայքում:

- **Ոտնձգությունից տուժած անձին մոտենալու արգելքի խախտում**

- **Տագնապի կոճակի ակտիվացում**

Հնարավոր է, որ տագնապի կոճակը սխալմամբ սեղմվի կամ ակտիվացվի: Կրկնվող ահազանգերը կարող են անհանգստություն առաջացնել ոտնձգությունից տուժած անձի մոտ, և, հետևաբար, նպատակահարմար կլինի անհապաղ նախնական քայլեր ձեռնարկել՝ ստուգելու, թե արդյոք ահազանգը սխալմամբ է միացել: Ստուգիչ գործողությանը անհապաղ արձագանք չստանալու դեպքում դա պետք է դիտարկվի որպես իրական ահազանգ և համապատասխան քայլեր ձեռնարկվեն:

- **Այլ հանգամանքներ**

[63] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 10:

Ծանուցում և արձագանք

Հիմնական կետերը, որոնց պետք է ուշադրություն դարձնել, այն են, թե ով է պատասխանատու իրավախախտի և ոտնձգությունից տուժած անձի հետ կապ հաստատելու համար, ինչ կարգով և ինչպիսի ընթացք է տրվում խախտմանը, եթե իրավախախտը չի արձագանքում ծանուցմանը: Հրահանգի կատարումից խուսափելը կամ դրա պայմանների խախտումը սովորաբար հանգեցնում են քրեական պատասխանատվության:

Իսպանիայում հսկողության համակարգը ավտոմատ կերպով ծանուցումը գեներացնում է հետևյալ դեպքերում.[64]

ՖԻՔՍՎԱԾ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ. իրավախախտը մտել է դատական մարմնի սահմանած արգելված գոտիներից մեկն, այսինքն՝ իրավախախտի գտնվելու վայրի հեռավորությունն այն կոնկրետ վայրերի նկատմամբ (աշխատավայր, տուն, դպրոց, համայնքային տարածք և այլն), որոնց մոտենալն արգելված է դատական որոշմամբ, ավելի փոքր է, քան սահմանված է որոշման մեջ:

ԴԻՆԱՄԻԿ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ. իրավախախտի գտնվելու վայրի հեռավորությունը ոտնձգությունից տուժած անձի գտնվելու վայրից դատական որոշմամբ սահմանված հեռավորությունից փոքր է:

ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԻ ԹՐԵՔԵՐՈ.: ոՈտնձգությունից տուժած անձի թրեքերը հայտնաբերում է նշված ռադիոհաճախականության ազդանշանը, ինչը նշանակում է, որ իրավախախտը (օպտիմալ պայմաններում) գտնվում է ոտնձգությունից տուժած անձից 500 մետրից պակաս հեռավորության վրա:

ԹՐԵՔԵՐԻ ԿԱՄ ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ՎՆԱՍՈՒՄ. Իրավախախտի թրեքերը (տեղորոշման սարքը) կամ ապարանջանը (ռադիոհաճախականության հաղորդիչը) կոտրվել է կամ ենթարկվել է չարտոնված միջամտության:

ԹՐԵՔԵՐԻ ԿԱՄ ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ՄԱՐՏԿՈՑԸ ԼԻՑՔԱԹԱՓՎԵԼ Է.: Մարտկոցի լիցքաթափման մասին ծանուցվում է 7-10 օր առաջ, որպեսզի հնարավոր լինի վերալիցքավորել այն:

ՏԱԳՆԱՊԻ ԿՈՃԱԿՆ ԱԿՏԻՎԱՑՎԱԾ Է. ոտնձգությունից տուժած անձի տեղորոշման սարքից տագնապի ազդանաշն է ստացվել: Համակարգում այն մուտքագրումից բացի ավտոմատ հեռախոսազանգ է հղվում հսկիչ կենտրոն՝ պատճառը պարզելու համար:

ՄՈՒՏՔ ՄՈՏԱԿԱ ՏԱՐԱԾՔ. իրավախախտը գտնվում է դատական մարմնի սահմանած ֆիքսված արգելված գոտիներից մեկին կամ ոտնձգությունից տուժած անձին մոտ գտնվող տարածքում:

ԹՐԵՔԵՐԻ և ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.իրավախախտի կրած ապարանջանը գտնվում է նրա GPS տեղորոշման սարքից մի քանի մետր հեռավորության վրա:

Ահազանգ ստանալու դեպքում COMETA վերահսկման կենտրոնն ուղարկում է գործողությունների արձանագրությամբ նախատեսված հաղորդագրություններ յուրաքանչյուր տեսակի ահազանգի համար, ինչպես նաև պատրաստում է զեկուցագիր, որն

[64] Իսպանիա՝ https://violenciagenero.igualdad.gob.es/informacionUtil/recursos/dispositivosControlTelematico/home.htm

ուղարկվում է ոտնձգությունից տուժած անձի պաշտպանության համար պատասխանատու ոստիկանության ստորաբաժանում, դատարան և դատախազություն:

Համապատասխան զեկուցագրերն դատարան կամ դատախազություն ուղարկվում են ահազանգից հետո առաջին աշխատանքային օրը:

Ծանուցումները բաժանվում են ահազանգերի և զգուշացումների՝ կախված ոտնձգությունից տուժած անձի համար հնարավոր վտանգից, ինչպես նաև սահմանվում են համապատասխան գործողություններ, որոնք պետք է ձեռնարկվեն.

Ահազանգ	**Զգուշացում**
Լուրջ տեխնիկական խնդիր	*Փոքր տեխնիկական խնդիր*
Հսկիչ կենտրոնը կապ է հաստատում է իրավասու անվտանգության մարմինների հետ այդ նպատակով տրամադրված հեռախոսահամարներով: Անհրաժեշտության դեպքում ոստիկանությունը դիմում է համապատասխան քայլերի և ապարանջանը կոտրվելու դեպքում այն զգուշությամբ հեռացվում է կամ մարտկոցը լիցքաթափվում է: Իրավախախտի հետ հանդիպելու անհրաժեշտության դեպքում հսկիչ կենտրոնը կապ է հաստատում ոստիկանության իրավասու ստորաբաժանման հետ՝ պարզելու, թե արդյոք անհրաժեշտ է, որ իրավախախտն այցելի ոստիկանական բաժանմունք: Եթե դա անհրաժեշտ է, հսկիչ կենտրոնը կապ է հաստատում իրավախախտի հետ և տեղեկացնում նրան այդ մասին: Եթե իրավախախտը հրաժարվում է համագործակցությունից, ոստիկանությունը այդ մասին անհապաղ տեղեկացնում է համապատասխան դատական մարմնին կամ հերթապահ դատավորին: **Հաղորդակցում ոտնձգությունից տուժած անձի հետ:** **Ոտնձգությունից տուժած անձը տեղեկացվում է տեխնիկական անսարքության մասին և, որ այդ մասին տեղեկացվել է ոստիկանության ծառայությունը, եթե խնդիրը չի լուծվել հսկիչ կենտրոնի կողմից: Խնդիրը լուծելուց հետո ոտնձգությունից տուժած անձին այդ մասին ծանուցում են:**	Եթե համակարգը սկսում է սխալներ թույլ տալ, բայց չի ընդհատվում, հսկիչ կենտրոնը որոշում է կայացնում ռիսկի մակարդակի վերաբերյալ: Եթե ռիսկը բարձր է, ապա դա դիտարկվում է որպես լուրջ տեխնիկական խնդիր: Սովորաբար նման դեպքերում հսկիչ կենտրոնն անմիջական հաղորդագրություն չի ուղարկում, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավիճակը համարվում է ռիսկային: Եթե իրավիճակը ռիսկային է, պետք է հետևել լուրջ տեխնիկական միջադեպի ընթացակարգին:

Իրավախախտի կողմից արգելված գոտի մուտք գործելը	*Իրավախախտի կողմից արգելված գոտուն մոտենալը*
Դեպքի մասին ոստիկանությունը հաղորդվում է այդ նպատակով տրամադրված հեռախոսահամարներով: Այնուհետև հսկիչ կենտրոնի և ոստիկանության միջև կապ է հաստատվում ՝ իրավախախտի և ոտնձգությունից տուժած անձի գտնվելու վայրը նույնականացնելու համար: **Անմիջապես** գործի է դրվում ոստիկանության ծառայության պաշտպանության ընթացակարգը: **Հաղորդակցում ոտնձգությունից տուժած անձի հետ:** Հսկիչ կենտրոնը կապ է հաստատում ուժողի հետ՝ նրա գտնվելու վայրը հաստատելու և համապատասխան ուղղորդում տրամադրելու համար: Եթե իրավախախտը մոտեցել է արգելված գոտուն, բայց չի հատել այն, հսկիչ կենտրոնը մուտքը կամ խախտումը հնարավոր է համարում և ոտնձգությունից տուժած անձի հետ կապ է հաստատում:	Եթե իրավախախտը գտնվում է արգելված գոտու մոտակայքում, այն հանգամանքներում, երբ գոտին հատելը հավանական է, իրավախախտին հաղորդում են այդ մասին, որպեսզի նա հեռանա: Եթե իրավախախտը հատում է արգելված գոտին դա դիտվում է որպես ահազանգ և գործողություններ են ձեռնարկվում ըստ սահմանված ընթացակարգի:
Մոտեցում ոտնձգությունից տուժած անձին և արգելված գոտուն՝ տեղորոշման համակարգի ծածկույթի կորստի պայմաններում	*Ոտնձգությունից տուժած անձի կողմից տագնապի կոճակը սեղմելը*
Տեղորոշման համակարգի ծածկույթը ժամանակավոր կորցնելու դեպքում հսկիչ կենտրոնն հաղորդում է դեպքի մասին տարածքային իրավասու ոստիկանության ստորաբաժանմանը տրամադրված հեռախոսների միջոցով (091, 062 և մարզային ոստիկանության բաժանմունքի համապատասխան համարին): Ծածկույթը վերականգնվելուն պես, Վերահսկիչ կենտրոնը ոստիկանության նույն ստորաբաժանումներին անմիջապես տեղեկացնում է ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի գտնվելու վայրի մասին:	Հսկիչ կենտրոնը կապ է հաստատում ոտնձգությունից տուժած անձի հետ՝ ճշտելու՝ ահազանգը պատահական է, թե վտանգավոր իրավիճակն առկա է: Եթե կապը չի վերականգնվում կամ վտանգավոր իրավիճակը հաստատվում է, ձեռնարկվում են իրավախախտի կողմից արգելված գոտին խախտելու դեպքում նախատեսված քայլեր:
Ահազանգ ստանալու բոլոր դեպքերում, այդ մասին հաղորդվում է ոտնձգությունից տուժած անձի պաշտպանության համար պատասխանատու ոստիկանության ստորաբաժանմանը, դատական մարմնի և դատախազությանը: Եթե ահազանգը ստացվել է արգելված գոտի մուտք գործելու առնչությամբ, ապա հսկիչ կենտրոնը հաղորդում է ուղարկում նաև	

ոստիկանության կոնտակտային կետ՝ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանում ուղարկելու համար:

Վրաստանում թիվ 126 որոշմամբ սահմանված են մի շարք գործողություններ, որոնց համապատասխան մարմինները պետք է դիմեն խախտման դեպքում:[65]

- ✓ Էլեկտրոնային հսկողության համակարգում շահագործման կանոնի խախտման վերաբերյալ հաղորդագրություն ստանալուց հետո լիազորված աշխատակիցը կապվում է իրավախախտի հետ և զգուշացնում խախտումը վերացնելու մասին:
- ✓ Իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի հետ շփումն իրականացվում է լիազորված աշխատակցի կողմից ինչպես ընդունող սարքի, այնպես էլ այլընտրանքային կապի միջոցների (առկայության դեպքում):
- ✓ Շահագործման կանոնների խախտման հետևանքով իրավախախտի հետ կապ հաստատելու հնարավորության բացակայության դեպքում լիազորված աշխատակիցը այդ մասին տեղեկացնում է նախարարության իրավասու մարմնին: Նախարարության իրավասու մարմնի ներկայացուցիչը մինչև իրավախախտի գտնվելու վայրը որոշելը/նրա հետ կապ հաստատելը կապվում է ոտնձգությունից տուժած անձի հետ և վերջինիս համաձայնությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ նրան պաշտպանելու համար:
- ✓ Լիազորված աշխատակցի կողմից տրված զգուշացումը ձայնագրվում է, ինչպես նաև պահպանվում է իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի հետ շփման բովանդակությունը:
- ✓ Եթե իրավախախտի կողմից սարքի շահագործման կանոնների խախտման պատճառով անհնար է իրականացնել էլեկտրոնային հսկողություն, ապա դա դիտվում է որպես էլեկտրոնային հսկողությունից խուսափում, հանգեցնելով քրեական պատասխանատվության:

Միջգերատեսչական համագործակցություն

Գերատեսչությունների միջև թույլ կամ բացակայող համագործակցությունը գնահատվել է որպես հսկողության արդյունավետությունը նվազեցնող գործոն:[66] Մասնավորապես, երբ կողմերը ներգրավված են ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարություններում, և կան դատարանի հակասական որոշումներ, օրինակ՝ որոշումներ, որոնք, երեխաների հետ շփումը հեշտացնելու համար նախատեսում են ոտնձգությունից տուժած անձի հանդիպում էլեկտրոնային հսկողության տակ գտնվող իրավախախտի հետ, դա կարող է հանգեցնել շփոթության, պահանջի չկատարման և այլ խնդիրների:

Հսկիչ կենտրոնի և անվտանգության այլ համապատասխան մարմինների և պաշտպանական գերատեսչությունների, ներառյալ դատական մարմինների միջև պետք է լինեն հաղորդակցության հստակ ընթացակարգեր և պատասխանատվության բաշխում:

Վրաստանում դա ամրագրված է թիվ 126 որոշման 12-րդ հոդվածում:

1. Էլեկտրոնային հսկողության փոխհամաձայնեցված գործողություններն իրականացնում են էլեկտրոնային հսկողության իրականացման մասին արձանագրություն կազմած կամ ոտնձգությունից տուժած անձի պաշտպանությունն ապահովելու նպատակով սահմանված խափանման միջոցի և էլեկտրոնային հսկողության իրականացման արձանագրությամբ նախատեսված պահանջների և պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի, ինչպես նաև նախարարության սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից:

[65] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 15:
[66] Ibarra P. Gur O. and Erez E. (2023)

2. Արձանագրությունը նախարարության այլ իրավասու մարմին փոխանցելու դեպքում էլեկտրոնային հսկողության իրականացման մասին արձանագրություն կազմող նախարարության լիազոր մարմինը՝ նշված արձանագրությամբ նախատեսված պահանջների և պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովելու նպատակով, պարտավոր է նշված փաստի մասին տեղեկացնել հսկիչ կենտրոնի լիազորված աշխատակցին:

3. Ոտնձգությունից տուժած անձի պաշտպանությունն ապահովելու նպատակով հսկիչ կենտրոնի լիազորված աշխատակիցը անհրաժեշտության դեպքում ապահովում է ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի հետ կապը:

4. Նախարարության մարմինը, որը վերահսկում է պաշտպանական որոշմամբ և ոտնձգությունից տուժած անձի պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծված էլեկտրոնային հսկողության իրականացման մասին արձանագրությամբ նախատեսված պահանջների և պարտավորությունների կատարումը, պարտավոր է հսկիչ կենտրոնին տրամադրել տեղեկատվություն իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի համար հասկանալի լեզվով, եթե նրանք չեն տիրապետում պետական լեզվին:

Իսպանիայում էլեկտրոնային հսկողության վերաբերյալ արձանագրություններում մանրամասն հրահանգներ են տրվում պետական մարմինների միջև հաղորդակցության, այդ հաղորդակցության եղանակի, բովանդակության և ժամկետների վերաբերյալ:

Հսկողության դադարեցում կամ կասեցում և սարքի հեռացում

Էլեկտրոնային հսկողության համակարգը կարող է չեղարկվել մինչև հսկողության ժամկետի ավարտը, ժամանակավորապես հանվել, կասեցվել կամ դադարեցվել: Անհրաժեշտ են ընթացակարգեր, որոնք կմանրամասնեն, թե ով է պատասխանատու սարքը հանելու համար և ինչ հանգամանքներում: Կարևոր է նաև ապահովել, որ ժամանակավոր հեռացումից կամ կասեցումից հետո հսկողությունը, անհրաժեշտության դեպքում, շարունակվի, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

- ✓ որքա՞ն շտապ պետք է հեռացվի սարքը.
- ✓ արդյո՞ք պահանջվում է դատարանի որոշում.
- ✓ ո՞վ է տեղեկացնում հրաման արձակող դատարանին.
- ✓ ո՞վ է տեղեկացնում հսկիչ կենտրոնին.
- ✓ ի՞նչ տեղի կունենա հսկողությունը դադարեցնելու դեպքում .
- ✓ ինչպե՞ս է վերսկսվում հսկողությունը:

Սարքը կարող են հեռացնել տեղադրողները, ոստիկանության աշխատակիցները կամ անվտանգության այլ ծառայությունները, քրեակատարողական հիմնարկի կամ հիվանդանոցի անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները: Նրանք պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն և ծանոթանան արձանագրություններին:

Չեղարկումը մինչև հսկողության ժամկետի ավարտը.

Հանգամանքների փոփոխությունը կարող է պահանջել հսկողության չեղարկում կամ դադարեցում նախքան սկզբնապես սահմանված ժամկետը: Դա սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, երբ բռնության վտանգը այլևս գոյություն չունի:

Վրաստանում Օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածները նախատեսում են, որ էլեկտրոնային հսկողությունը կարող է չեղարկվել մինչև վերջնաժամկետը՝ դիմելով դատարան, եթե տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, ներառյալ իրավախախտի ծանր հիվանդությունը, հաշվի առնելով այն, որ բռնության կրկնության վտանգը բացառվում է, կամ, եթե ոտնձգությունից տուժած անձը դիմում է ոստիկանություն՝ հսկողությունը դադարեցնելու համար: Հանգամանքների փոփոխությունից կամ ոտնձգությունից տուժած անձի խնդրանքից հետո 24 ժամվա ընթացքում ոստիկանությունը պարտավոր է դիմել դատարան: Դիմումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում դատարանը քննում է հարցը:

Ավտոմատ չեղարկումը տեղի է ունենում այն բանից հետո, երբ լիազոր մարմինը վերացնում է խափանման միջոցը կամ իրավախախտի մահվան դեպքում:[67]

Ժամանակավոր հեռացում

Կարող են լինել դեպքեր, երբ իրավախախտից սարքի ժամանակավոր հեռացումը տեղին է կամ անհրաժեշտ, օրինակ՝ բժշկական կամ անվտանգության նկատառումներից ելնելով կամ իրավախախտի քրեակատարողական հիմնարկում հայտնվելու կամ ազատությունից զրկվելու պատճառով: Պետք է հստակ սահմանել, թե ով կարող է թույլատրել ժամանակավոր հեռացումը, ինչ հանգամանքներում, ով է պատասխանատու սարքը նորից միացնելու համար և ինչ ընթացակարգեր պետք է պահպանվեն:

[67] Վրաստան, 2006թ. թիվ 20 օրենք (փոփոխված), հոդված 10-բիս 1 (27):

Իսպանիայում, որտեղ սարքի ժամանակավոր հեռացումն անհրաժեշտ է բժշկական, անվտանգության նկատառումներից ելնելով և իրավախախտին քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու դեպքում, որոշումը համաձայնեցվիում է դատական մարմնի հետ և իրականացվում տեղադրող ընկերության անձնակազմի կողմից՝ համաձայն որոշման պահանջների: Ցանկացած հետագա տեղադրում նույնպես իրականացվում է դատական մարմնի որոշմամբ:

Անհետաձգելի դեպքերում, որոնք պահանջում են սարքի անհապաղ հեռացում, ոստիկանության ստորաբաժանումը, որը միջամտում է կամ տեղյակ է այդ մասին, պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել միջոցը կայացրած դատարանին, սարքը հանելու և դրա պատճառի մասին, ինչպես նաև տեղեկացնել հսկիչ կենտրոնին: Հեռացման պատճառների դադարելու դեպքում ոստիկանության իրավասու ստորաբաժանումը տեղեկացնում է այդ մասին որոշումը կայացրած դատարանին, իսկ դրա անհնարինության դեպքում, հերթապահ դատարանին, որը որոշում է հետագա քայլերը: Սարքի վերատեղադրման մասին որոշում կայացնելու դեպքում դատարանն տեղեկացնում է հսկիչ կենտրոնին, որ նշված կապի ստացման օրվանից առավելագույնը 24 ժամվա ընթացքում համապատասխան սարքավորումները վերատեղադրվելու են:

Այդ ընթացքում իրավասու ոստիկանության ստորաբաժանումը ձեռնարկում է ցանկացած այլ անհրաժեշտ միջոց՝ ոտնձգությունից տուժած անձի պաշտպանության համար:

Վրաստանում էլեկտրոնային հսկողությունը կասեցվում է, երբ իրավախախտը կամ ոտնձգությունից տուժած անձը լքում են տարածքը որոշ ժամանակով մեկնելով արտերկիր, ոտնձգությունից տուժած անձի կամ իրավախախտի ազատությունից զրկվելու, իրավախախտին կամ ոտնձգությունից տուժած անձին վարչական կալանքի ժամկետ նշանակելու կամ ազատազրկման դեպքերում:[68] Թիվ 126 որոշման հավելված 2-ը պարունակում է հսկողության կասեցման ընթացակարգ, որը պահանջում է հետևյալ տվյալների գրանցումը.

- ✓ Հսկողությունը կասեցնելու մասին որոշում կայացնող համապատասխան անձի անունը, ազգանունը և պաշտոնը
- ✓ Ամսաթիվը
- ✓ Հսկողությունը կասեցնելու հիմքերը
- ✓ Կասեցման ժամկետը
- ✓ Էլեկտրոնային ապարանջանի հեռացման ժամը և վայրը
- ✓ Իրավախախտի անունը, ազգանունը, անձնական համարը, ծննդյան տարեթիվը և բնակության վայրը
- ✓ Ոտնձգությունից տուժած անձի անունը, ազգանունը, անձնական համարը, ծննդյան տարեթիվը և բնակության վայրը
- ✓ Ոտնձգությունից տուժած անձի կամ վերահսկողի կողմից փաստաթուղթը ստորագրելուց հրաժարվելու պատճառների մասին նշում կատարելու համար նախատեսված տարածքը

Այն պարունակում է նաև նմանատիպ հոդված[69] և ընթացակարգ (Հավելված 3) նախկինում կասեցված էլեկտրոնային հսկողության շարունակման համար, որը սահմանում է Հավելված 2-ում նշված պայմանների ավարտը:

- ✓ Իրավախախտի վերադարձ Վրաստանի տարածք
- ✓ Ոտնձգությունից տուժած անձների վերադարձ Վրաստանի տարածք
- ✓ Ազատությունից զրկված իրավախախտի ազատ արձակում
- ✓ Ազատությունից զրկված ոտնձգությունից տուժած անձների ազատ արձակում
- ✓ Իրավախախտի վարչական կալանքից ազատելը
- ✓ Ոտնձգությունից տուժած անձանցվարչական կալանքից ազատելը

[68] [68] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 17:

[69] [69] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 17(3):

- ✓ Իրավախախտի նկատմամբ խափանման միջոցների չեղարկում/դադարեցում՝ կալանավորում
- ✓ Ոտնձգությունից տուժած անձանց նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների չեղարկում/դադարեցում՝

Էլեկտրոնային հսկողությունը դադարեցվում է էլեկտրոնային հսկողության ժամկետի ավարտից հետո՝ իրավախախտի կամ ոտնձգությունից տուժած անձի մահվան պատճառով, խափանման միջոցը չեղարկելու կամ դատարանի կողմից էլեկտրոնային հսկողության միջոցը չեղարկելու դեպքում:[70]

Ի՞նչ է տեղի ունենում, երբ իրավախախտին կամ ոտնձգությունից տուժած անձին ուղարկում են քրեակատարողական հիմնարկ:

Քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ է հեռացնել էլեկտրոնային ապարանջանը: Քննարկման են ենթակա հետևյալ հարցերը.

- ✓ Ո՞վ է այս ընթացակարգն իրականացնելու համար պատասխանատու անձը:
- ✓ Ու՞մ պետք է տեղեկացնել:
- ✓ Ինչպե՞ս դա պետք է արվի և արձանագրվի:
- ✓ Ի՞նչ տեղի կունենա, եթե իրավախախտին տեղափոխեն այլ քրեակատարողական հիմնարկ:
- ✓ Արդյո՞ք կան համապատասխան ժամկետներ, որոնք պետք է նշել (օրինակ, հսկողության հրամանի ժամկետի ավարտի ամսաթիվը):
- ✓ Արդյո՞ք կան այցելուների հետ կապված մտահոգություններ:

Եթե անձը նախկինում կրել է ապարանջան, բայց այն հանվել է քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուց անմիջապես առաջ, օրինակ՝ ոստիկանական բաժանմունքում կամ դատարանում, դա պետք է հստակորեն գրանցվի քրեակատարողական հիմնարկի գրանցամատյանում, որպեսզի այդ հանգամանքը հաշվի առնվի անձի ազատ արձակման ժամանակ: Եթե անձը տեղափոխվում է այլ քրեակատարողական հիմնարկ, այս տեղեկատվությունը նույնպես փոխանցվում է: Պետք է նաև ուշադիր լինել այցելությունների մասին որոշումներին, հատկապես, երբ ոտնձգությունից տուժած անձը գտնվում է քրեակատարողական հիմնարկում, ապահովելու համար, որ իրավախախտը չշարունակի բռնությունը քրեակատարողական հիմնարկ այցելությունների միջոցով:

Պետք է նշվի այն ամսաթիվը, երբ դադարում է հսկողության պահանջը, և, մինչև իրավախախտին ազատ արձակելը, որոշվի նրա նկատմամբ էլեկտրոնային հսկողությունը վերսկսելու հարցը:

Իսպանիայում քրեակատարողական ոլորտում հսկողության համակարգի՝ գենդերային բռնության ոլորտում տելեմատիկ պատժամիջոցների հարցերը կարգավորող ընթացակարգը (2015թ. հոկտեմբերի ընթացակարգ) վերաբերում է այն հարցին, թե ինչ է տեղի ունենում, երբ իրավախախտը քրեակատարողական հիմնարկ է մտնում կամ դուրս գալիս այնտեղից:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն անմիջապես հաղորդակցվում է հսկիչ կենտրոնի հետ, իսկ հսկիչ կենտրոնի աշխատակիցները սարքը հեռացնում են 24 ժամվա ընթացքում: Հսկիչ կենտրոնը տեղեկացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին իրավասու դատական մարմնի մասին, որը զբաղվում է էլեկտրոնային հսկողությամբ: Այնուհետև քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հաղորդակցվում է դատական մարմնի հետ այն հարցի շուրջ, թե արդյոք ոտնձգությունից տուժած անձը կրել է սարքը քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակ, թե այն հեռացվել է,

[70] Վրաստան, 2020թ. թիվ 126 որոշում, հոդված 18:

որպեսզի որոշում կայացվի, թե ինչ քայլերի պետք է դիմել ոտնձգությունից տուժած անձի քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում իրավավախտի կողմից կրվող սարքի առնչությամբ, և անհրաժեշտության դեպքում, ոտնձգությունից տուժած անձի սարքի վերատեղադրման վերաբերյալ՝ քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը տեղեկատվություն է հայցում այն մասին, թե որն է համակարգի ներդրումը մշտադիտարկող իրավասու դատական մարմինը և կիրառվող միջոցի գործողության ժամկետի մասին, իսկ անհրաժեշտության դեպքում, որոշումը կիրարկող դատական որոշումը ուղարկվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին և հսկիչ կենտրոն: Եթե անձը քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելիս կրել է էլեկտրոնային հսկողության սարքը, այդ մասին կազմվում է արձանագրություն:

Ոտնձգությունից տուժած անձի կամ իրավախախտի այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու դեպքում այդ տեղեկատվությունը փոխանցվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկի վարչակազմին: Դա թույլ է տալիս ապահովել, որ քրեակատարողական հիմնարկ այցելելու թույլտվություններ տրամադրելիս կամ անձին ազատ արձակելու դեպքում ռիսկը հստակ ճանաչվում է:

Քրեակատարողական հիմնարկը պետք է տեղյակ լինի միջոցի կամ վտարման հրամանի վավերականության մասին, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային մշտադիտարկման ժամանակահատվածի և դատական մարմնի համապատասխան գործողությունների մասին:

Քրեակատարողական հիմնարկից ժամանակավորապես ազատում

Եթե ազատությունից զրկված անձին ժամանակավոր թույլատրվում է տնային տեսակցություններ կատարել կամ ցերեկային ժամերին նա ազատ է արձակվում (օրինակ՝ հարազատի մահվան կամ լուրջ հիվանդության, դժբախտ պատահարի կամ այլ բացառիկ հանգամանքների դեպքում), որոշում է կայացվում, թե արդյոք այդ ընթացքում ապարանջանը կրկին ամրացվում է անձին՝ ապահովելու նրա անվտանգ ժամանակավոր ազատումը (տես նաև վերևում ժամանակավոր հեռացման վերաբերյալ մասը):

Քրեակատարողական հիմնարկից ազատում

Ազատ արձակման նախապատրաստվելիս հաշվի է առնվում, թե արդյոք անձը նախկինում եղել է էլեկտրոնային հսկողության տակ, թե ոչ: Եթե այո և հրամանի ժամկետը դեռ չի լրացել, քրեակատարողական հիմնարկը սովորաբար կազմակերպում է սարքի տեղադրումը նախքան ազատ արձակելը և ոտնձգությունից տուժած անձին տեղեկացնում է այդ մասին հսկիչ կենտրոնի միջոցով:

Իսպանիայում, եթե հրամանի ժամկետը լրացել է, քրեակատարողական հիմնարկը կապ է հաստատում դատական կամ այլ համապատասխան մարմնի հետ՝ ապահովելու համապատասխան գործողությունները մինչև ազատ արձակվելը:
Եթե ազատությունից զրկված անձի առնչությամբ առկա է ազատման հրաման ունի կամ նրա պատժի ժամկետը լրանում է առանց սարքի տեղադրման գործողությունների, կամ դա հնարավոր չէ անել մինչև ազատ արձակվելը, անձը ազատ է արձակվում առանց էլեկտրոնային հսկողության: Նման դեպքում անձի ազատ արձակման և հետագա գործողությունների մասին տեղեկացվում է հսկիչ կենտրոնը և հսկողության համակարգի դատական մարմինը կամ համապատասխան հերթապահ դատարանը:

Եթե անձի ազատ արձակման պահին դատական մարմնի կողմից էլեկտրոնային հսկողության վերաբերյալ ցուցումներ չեն տրվում, ապա քրեակատարողական հիմնարկը ազատ արձակումից 48 ժամ առաջ քայլեր է ձեռնարկում՝ կապ հաստատելու համապատասխան դատական մարմնի հետ՝ սարքը վերատեղադրելու քայլերի վերաբերյալ: Ազատ արձակման փաստը անհապաղ հաղորդվում է հսկիչ կենտրոնին և դատական

մարմնին համապատասխան արդյունավետ միջոցներով (հեռախոսի, ֆաքսի կամ հեռահաղորդակցական):

Ի՞նչ է տեղի ունենում, եթե էլեկտրոնային հսկողություն իրականացնելու վերաբերյալ որոշում է կայացվում քրեակատարողական հիմնարկում գտնվող իրավախախտի նկատմամբ :

Կարևոր է, որ ցանկացած նման որոշում հաշվի առնի քրեակատարողական հիմնակրի համապատասխան գրառումները, որպեսզի պատշաճ կերպով իրականացվեն վերը նշված համապատասխան քայլերը, որոնք վերաբերում են քրեակատարողական հիմնարկից ազատմանը, ներառյալ ժամանակավոր ազատմանը:[71]

Ի՞նչ է տեղի ունենում, եթե իրավախախտը կամ ոտնձգությունից տուժած անձը արտաքսվել են կամ լքում են տարածքը:

Ստամբուլյան կոնվենցիայի 62-րդ հոդվածը կոչ է անում ճանաչել դատարանի կողմից նշանակված պաշտպանական հրամանները: Դա հաշվի առնելով պետք է քայլեր ձեռնարկվեն՝ ապահովելու, որ արտաքսման դեպքերում պաշտպանական որոշումը հաղորդվի ընդունող պետությանը և ջանքեր գործադրվեն կամավոր հաղորդակցություն ապահովելու համար, երբ ոտնձգությունից տուժած անձը հեռանում է: Անհրաժեշտ է նախատեսել հրամանի դադարեցում և ոտնձգությունից տուժած անձի հնարավոր հետագա պաշտպանություն:

- ✓ Արդյո՞ք հսկողությունը պետք է կասեցվի, թե դադարեցվի:
- ✓ Ինչպե՞ս և որտեղ վերադարձնել սարքերը:
- ✓ Ոտնձգությունից տուժած անձի անվտանգությունը վերադառնալու և մեկնելու ժամանակահատվածի միջև (նաև օդանավակայանում):
- ✓ Համապատասխան ժամանակահատվածները:

Վրաստանում գործում է լավ մշակված կանոն այն մասին, թե ինչ է տեղի ունենում, եթե ոտնձգությունից տուժած անձը կամ իրավախախտը լքում են երկիրը՝ համաձայն 13 (3) հոդվածի.

3. Իրավախախտը/ոտնձգությունից տուժած անձը պարտավոր է.

- ✓ չլքել Վրաստանի տարածքը՝ կրելով էլեկտրոնային ապարանջանը/ընդունիչ սարքը.
- ✓ տեղեկացնել նախարարության լիազոր մարմնին Վրաստանի պետական սահմանը հատելու մասին (Վրաստանից մեկնելու և Վրաստան մուտքի ժամի մասին) սահմանը հատելուց առնվազն 48 ժամ առաջ.
- ✓ հանձնել էլեկտրոնային սարքը/ընդունող սարքը լիազոր տարածքային մարմնին Վրաստանից մեկնելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ.
- ✓ Վրաստան մուտք գործելուց ոչ ուշ, քան 12 ժամ հետո զեկուցել լիազոր տարածքային մարմնին՝ էլեկտրոնային սարքը/ընդունիչ սարքը կցելու/հանձնելու մասին՝ էլեկտրոնային հսկողությունը շարունակելու համար.
- ✓ էլեկտրոնային հսկողության ավարտից անմիջապես հետո զեկուցել նախարարության լիազոր մարմնին՝ իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի էլեկտրոնային ապարանջանը հանելու և ընդունող սարքը հանձնելու համար.

[71] Տես, օրինակ, Իսպանիա, 2015թ. արձանագրություն, բաժին 4:

- ✓ էլեկտրոնային հսկողության ավարտից անմիջապես հետո զեկուցել նախարարության լիազոր մարմնին՝ իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի էլեկտրոնային ապարանջանը հանելու և ընդունող սարքը հանձնելու համար.
- ✓ կատարել հսկիչ կենտրոնի ցուցումները:

Կանոնները վերաբերում են նաև այդ փոփոխություններից որևէ մեկի մասին հսկիչ կենտրոնին տեղեկացնելու պահանջներին: Պայմաններից որևէ մեկը չկատարելու դեպքում իրավախախտին կամ ոտնձգությունից տուժած անձին արգելվում է լքել տարածքը:

Կարևոր է, որ ցանկացած նման կարգավորումներ իրականացնելիս ոտնձգությունից տուժած անձի տեղաշարժի ազատությունը չսահմանափակվի և չպատժվի: Սա կարող է հանգեցնել ոչ թե պաշտպանության, այլ կրկնազոհականացման:

Հսկողության ժամկետի ավարտը

Հսկողության ժամանակաշրջանի ավարտից հետո սարքը հեռացվում է և հետ է վերադարձվում:

Իսպանիայում սարքի հեռացման մասին որոշումը կայացվում է դատական գրասենյակի կողմից և այդ մասին 24 ժամվա ընթացքում տեղեկացվում է համապատասխան անվտանգության մարմինը և կենտրոնացված ընդունման կենտրոնը՝ հեռահաղորդակցական միջոցներով կամ ֆաքսով և կազմվում է անդորրագիր:

Դատական մարմինը տեղեկացնում է հսկիչ կենտրոնին հսկողության դադարեցման որոշման մասին, և հսկիչ կենտրոնը հաստատում է որոշումը ստանալու փաստը և դրա բովանդակությունը:

Տեղադրող ընկերությունն այնուհետև որոշում է կայացնում հեռացնել ապարանջանը: Ինչպես և տեղադրման դեպքում, դա իրականացվում է դատարանում՝ իրավախախտի պարագայում և ոտնձգությունից տուժած անձի տանը կամ մոտակա ոստիկանական բաժանմունքում՝ հնարավորինս հաշվի առնելով ոտնձգությունից տուժած անձի ցանկությունը:

Սարքերը հեռացնելուց հետո հսկիչ կենտրոնն անհապաղ տեղեկացնում է դատական մարմնին և ոտնձգությունից տուժած անձանց պաշտպանության համար պատասխանատու ոստիկանության ստորաբաժանմանը:

Վրաստանում էլեկտրոնային ապարանջանի հեռացման մասին արձանագրությունը (Հավելված 4) ձևաթուղթ է, որը լրացվում է արձանագրությունը կազմող անձի կողմից և ստորագրվում է իրավախախտի կամ ոտնձգությունից տուժած անձի կամ երկուսի կողմից, երբ սարքերը վերադարձվում են:

Ընտանեկան բռնության մասին Վրաստանի օրենքի հոդված 10-բիս 1-ը պարունակում է էլեկտրոնային հսկողության չեղարկման վերաբերյալ հետևյալ կետերը.
«25. Կիրառվող էլեկտրոնային հսկողության միջոցը կարող է չեղարկվել մինչև վերջնաժամկետը՝ դիմելով դատարան.
ա) իրավիճակի փոփոխության դեպքում, այդ թվում՝ իրավախախտի լուրջ հիվանդության պատճառով, եթե փոփոխված իրավիճակը բացառում է իրավախախտի կողմից բռնության կրկնության վտանգը.
բ) եթե ոտնձգությունից տուժած անձը դիմում է ոստիկանություն՝ էլեկտրոնային հսկողության իրականացումը չեղարկելու խնդրանքով.
26. Սույն հոդվածի 25-րդ կետով նախատեսված հանգամանքների առաջանալուց հետո 24 ժամվա ընթացքում ոստիկանությունը դիմում է դատարան՝ էլեկտրոնային հսկողության

իրականացումը չեղարկելու առաջարկով: Ոստիկանության կողմից դիմումը ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում դատարանը նշված հարցը քննում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:
27. Լիազոր մարմնի կողմից պաշտպանական որոշումը վերացնելը, իրավախախտի կամ ոտնձգությունից տուժած անձի մահը հանգեցնում է կիրառված էլեկտրոնային հսկողության միջոցի ավտոմատ վերացմանը:
28. Ոստիկանության լիազորված ծառայողն իրավունք ունի սույն հոդվածի 16-18-րդ կետերով սահմանված կարգով իրավախախտին կանչել ոստիկանության մոտակա բաժին՝ էլեկտրոնային սարքը հանելու համար:
29. Վրաստանի ներքին գործերի նախարարության իրավասու մարմինն կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը կանխելու նպատակով իրավասու է մշակել իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի անձնական տվյալները, ներառյալ էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները, ինչպես նաև իրավախախտի/ոտնձգությունից տուժած անձի հետ հաղորդակցությունն արտացոլող տվյալները:
30. Էլեկտրոնային հսկողություն իրականացնելու նպատակով Վրաստանի ՆԳՆ-ի, Վրաստանի դատախազության, Վրաստանի օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների նախարարության, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության, Վրաստանի արդարադատության նախարարության, դատարանի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան այլ գերատեսչությունների միջև տեղեկատվություն է փոխանակվում:»:

Խախտման համար նախատեսված պատախանատվության միջոցներ

Խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպող:[72]

Ստամբուլյան կոնվենցիան նշում է, որ անհետաձգելի միջամտության որոշման խախտումը «պետք է հանգեցնի իրավախախտի նկատմամբ պաշտոնական միջոցի կիրառման»:[73] Եվրոպայի խորհրդի անդամ մյուս երկրները նախատեսում են վարչական կամ քրեական պատտտասխանատվության միջոց տուգանքից մինչև ազատությունից զրկել:

Մասնավորապես, Yildirim-ն ընդդեմ Ավստրիայի գործով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն արձանագրեց, որ պետության կողմից իրավախախտին ազատությունից չզրկելը, երբ վերջինս երկու անգամ խախտել էր ոտնձգությունից տուժած անձի տնից, աշխատավայրից որոշակի հեռավորություն պահելու և ոտնձգությունից տուժած անձի հետ շփվելն արգելող միջանկյալ պաշտպանության միջոցները, հակասում է պատշաճ ջանասիրության սկզբունքին::[74]

Այս փաստաթղթում դիտարկված բոլոր օրինակներում էլեկտրոնային հսկողության պայմանների միտումնավոր խախտումները հանգեցրել են քրեական պատժամիջոցների կիրառման: Համապատասխան գերատեսչությունների միջև հաղորդակցման միջոցով քրեական հետապնդման ուղիները նախատեսված են օրենքով:

Տվյալների պաշտպանություն

Տվյալների պաշտպանության հետ կապված կան մի շարք մանրամասն և պարտավորեցնող միջազգային չափանիշներ: Առաջին նման փաստաթուղթը Անձնական տվյալների ավտոմատ մշակման առնչությամբ անձանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան է (ETS No. 108): Բացի այդ, ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի 1-ին մասում ասվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր համապատասխան դատական պրակտիկայում սահմանել է այդ իրավունքներից յուրաքանչյուրի իրականացման պայմանները, մասնավորապես, պետական մարմինների միջամտության իրավունքի չափը: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը, ներառյալ էլեկտրոնային հսկողությունը, էլ ավելի հնարավոր է դարձնում իրավախախտի անձնական և ընտանեկան կյանք ներխուժելը, մեծ քանակությամբ անձնական տվյալներ հավաքելը, պահպանելը, մշակելը և տարածելը: Քրեական արդարադատության մեջ, ինչպես և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, անփոխարինելի է հատուկ սկզբունքների և չափանիշների կայուն շրջանակի ստեղծումը, որոնք պաշտպանում են էլեկտրոնային հսկողության ենթակա անձանց իրավունքները:[75]

CM/Rec(2014)4
12. Համապատասխան գերատեսչությունների կողմից էլեկտրոնային հսկողության սահմանման և իրականացման հետ կապված հավաքագրված տվյալների մշակումը, ընդհանուր մատչելիությունը և համօգտագործումը հատուկ կարգավորվում են օրենքով:
13. Էլեկտրոնային հսկողության հետ կապված որոշումների կատարման համար պատասխանատու անձնակազմը պետք է լինի բավարար քանակի, համապատասխան և

---

[72] Ստամբուլյան կոնվենցիա, հոդված 53(3):
[73] Եվրոպայի խորհուրդ, ընտանեկան բռնության իրավիճակներում անհետաձգելի միջամտության որոշումները. Ստամբուլյան կոնվենցիայի 52-րդ հոդված., 2017թ., էջ 21:
[74] *Yildirum–ն ընդդեմ Ավստրիայի*, Հաղորդակցություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, կետ 12.1.5:
[75] ՆԿ հանձնարարականի մեկնաբանության նախագիծ (2014թ.) https://rm.coe.int/16806f97b1:

կանոնավոր կերպով վերապատրաստված՝ իրենց պարտականությունները արդյունավետ, արհեստավարժորեն և էթիկայի ամենաբարձր չափանիշներին համապատասխան կատարելու համար: Վերապատրաստման ընթացքում պետք է անդրադառնալ տվյալների պաշտպանության հարցին:

...

29. Էլեկտրոնային հսկողության ընթացքում հավաքագրված տվյալները ենթակա են հատուկ կարգավորման՝ տվյալների պահպանման, օգտագործման և փոխանակման վերաբերյալ համապատասխան միջազգային չափանիշների հիման վրա:

30. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի քրեական հետախուզության և դատավարության շրջանակներում նման տվյալների օգտագործման և փոխանակման խստորեն կանոնակարգմանը:

31. Նման տվյալների անզգույշ կամ դիտավորյալ սխալ օգտագործման կամ մշակման դեպքում գործադրվում է արդյունավետ պատասխանատվության միջոցների համակարգ:

32. Էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տրամադրող մասնավոր գործակալությունները կամ էլեկտրոնային հսկողության ներքո գտնվող անձանց վերահսկելու համար պատասխանատու մասնավոր գործակալությունները իրենց մոտ եղած տվյալների հետ կապված ենթարկվում են նույն կանոններին և կանոնակարգերին:

Տվյալների օգտագործումը և խախտումները

Էլեկտրոնային հսկողություն իրականացնելու նպատակով ձեռք բերված տվյալները շատ հաճախ պարունակում են անձնական տեղեկություններ, որոնք ենթակա չեն հրապարակման, և այդ տվյալների չարտոնված տրամադրումը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել անհատների անվտանգության համար: Օրինակ՝ կարող է բացահայտվել ապահով տան կամ ոտնձգությունից տուժած անձի ապաստանի գտնվելու վայրը, ինչը կարող է վտագավոր լինել ոչ միայն ոտնձգությունից տուժած անձի, այլև բոլոր նրանց համար, ովքեր ապրում են կացարանում: Օրենսդրությունը պետք է հստակ սահմանի տվյալների հավաքագրման նպատակը և կարգավորի այդ տվյալների ավտոմատ մշակումը, պահպանումն ու փոխանակումը, ինչպես նաև սահմանված ժամկետից հետո դրանց հեռացման հետ կապված ընթացակարգերը:[76] Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն նպատակին, որի համար հավաքագրվում են տվյալները: Էլեկտրոնային մոնիտորինգի նպատակով ձեռք բերված տվյալները չպետք է օգտագործվեն այլ նպատակներով: Տվյալների պաշտպանության, ծածկագրման և մատչելիության հարցուրմ անհրաժեշտ են հուսալի երաշխիքներ:

Պորտուգալիայում տվյալների բազայի ստեղծումը և այդ տվյալների բազայում պահելու թույլատրված տվյալները նախատեսված են օրենքով: Այդ տվյալները ներառում են.

- ✓ Էլեկտրոնային հսկողության ենթակա իրավախախտների կամ դատապարտյալների լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը, պատկանելությունը, ընտանեկան դրությունը, սեռը, ծննդյան վայրը, ազգությունը, ներկայիս հայտնի բնակության վայրը, քաղաքացիական և հարկային ինքնությունը հաստատող համարը.
- ✓ Կիրառվող միջոցի կամ տույժի նշումը.
- ✓ Էլեկտրոնային հսկողության մեկնարկի ամսաթիվը, չեղարկումը և ավարտը.
- ✓ Դատարանը և գործի համարը, որի մասով որոշում է կայացվել.
- ✓ Առերևույթ հանցանքների տեսակները.
- ✓ Մեղադրյալի կամ դատապարտյալի և ոտնձգությունից տուժած անձի փոխհարաբերությունների տեսակը ընտանեկան բռնության և հարակից հանցագործությունների դեպքում.
- ✓ Փաստերի հանգամանքների ամսաթիվը.
- ✓ Տեսահսկող սարքի տեղադրման վայրը.
- ✓ Էլեկտրոնային հսկողության վերաբերյալ գրառումները:

[76] ՆԿ հանձնարարականի մեկնաբանության նախագիծ (2014թ.) https://rm.coe.int/16806f97b1

Օրենքը սահմանում է նաև տվյալների մշակման համար պատասխանատու մարմինը: Կենսաչափական տվյալները, ինչպիսիք են դեմքի պատկերները և ձայնի նմուշները, ենթակա են հատուկ ուշադրության, մասնավորապես, օրենքը հստակեցնում է, որ տվյալների բազայում դեմքի պատկերները կարող են հասանելի լինել միայն էլեկտրոնային հսկողության գործողություններում ներգրավված մարմիններին՝ հսկողության տակ գտնվող անձին ճանաչելու նպատակով, այլ ոչ՝ ցանկացած այլ նպատակով: Ձայնի նմուշները կարող են հավաքվել և ձայնագրվել՝ ստուգելու համար, որ հսկողության տակ գտնվող անձը մնում է տվյալ վայրում:
Համակարգ մուտք գործելու իրավունակ տեխնիկական մասնագետները տվյալների բազա մուտք գործելու թույլտվություն են ստանում և պարտավոր են պահպանել մասնագիտական գաղտնիությունը նույնիսկ իրենց պարտականությունների ավարտից հետո:

Անձնակազմի վերապատրաստում

CM/Rec 2014.
34. Անձնակազմը վերապատրաստվում է կասկածյալների և իրավախախտների հետ նրբանկատորեն շփվելու, նրանց հասկանալի ձևով և լեզվով տեղեկացնելու տեխնոլոգիայի օգտագործման, անձնական և ընտանեկան կյանքի վրա դրա ազդեցության և անթույլատրելի օգտագործման հետևանքների մասին:
35. Անձնակազմը վերապատրաստվում է ոտնձգությունից տուժած անձների հետ շփվելու վերաբերյալ այն դեպքերում, երբ էլեկտրոնային հսկողության շրջանակներում օգտագործվում են ոտնձգությունից տուժած անձանց աջակցության ծրագրեր:
36. Էլեկտրոնային հսկողության համակարգեր մշակելիս հաշվի են առնվում հսկիչ կենտրոնի կողմից հավաքագրված տվյալների ինչպես մարդկային, այնպես էլ ավտոմատացված արձագանքների համապատասխան արժանիքները՝ նկատի ունենալով յուրաքանչյուրի առավելությունները:
37. Էլեկտրոնային մոնիտորինգի սահմանման կամ իրականացման համար պատասխանատու վստահված անձնակազմը պարբերաբար վերապատրաստվում է էլեկտրոնային հսկողության ենթակա անձանց վրա սարքերի շահագործման, օգտագործման և ազդեցության վերաբերյալ:
38. Անձնակազմը վերապատրաստվում է տեխնոլոգիաների տեղադրման և հանման, ինչպես նաև տեխնիկական աջակցություն տրամադրելու հարցում՝ սարքերի արդյունավետ և ճշգրիտ աշխատանքն ապահովելու համար:

Անձնակազմի՝ պատշաճ վերապատրաստվածությունը էական նշանակություն ունի էլեկտրոնային հսկողության ծրագրի հաջող իրականացման համար: Քանի որ հսկողությունը պահանջում է անձնակազմից շուրջօրյա հերթապահություն՝ սթրեսային միջավայրում անձնակազմի հոսունությունը կարող է մեծ լինել, որը կանխելու համար անհրաժեշտ է շարունակական վերապատրաստում և մեծ ուշադրության անձնակազմի բարեկեցությանը: Վերապատրաստումը պետք է ներառի էլեկրոնային հսկողության սարքավորումների տեղադրումը, սպասարկումը և մշտադիտարկումը, ահազանգերին արձագանքելը (իսկական կամ կեղծ) և իրավախախտներին վերահսկելը:[77]
Բռնության միջադեպերին արձագանքող անձնակազմը կարող է իրեն անապահով զգալ տնային այցելություններ կատարելիս, հատկապես գիշերային ժամերին:[78] Անհրաժեշտ է անձնակազմի անվտանգության, ինչպես նաև էլեկտրոնային սարքերի անխափան աշխատանքի պատշաճ ապահովում:[79]

[77] Belur J. et al (2020թ.):
[78] Tennessee (2007թ.) անձնակազմը հայտնել է, որ իրեն անապահով է զգում սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց հսկողության ընթացքում:
[79] Belur J. et al (2020թ.):

Հիմնական նկատառումները

Ծրագրի նպատակների և խնդիրների ճիշտ սահմանումը, գործառույթների և պարտականությունների հստակությունը, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության ծրագրում ներգրավված տարբեր գերատեսչությունների միջև արդյունավետ հաղորդակցության և կառավարման ապահովումը էական են ծրագրի հաջողության համար: Ստորև ամփոփված են այդ հարցերի վերաբերյալ հիմնական նկատառումները:

1. **Պետությունը կրում է ոտնձգությունից տուժած անձին պաշտպանելու և իրավախախտի իրավունքները երաշխավորելու պատասխանատվություն: Այդ պատասխանատվությունը չի դադարում, երբ հսկողության գործընթացն ամբողջությամբ կամ նրա մի մասը պայմանագրով փոխանցվում է մասնավոր ընկերությանը: Էլեկտրոնային հսկողության սարքերը ոչ մի դեպքում չեն կարող օգտագործվել կասկածյալին կամ իրավախախտին դիտավորյալ ֆիզիկական կամ հոգեկան վնաս կամ տառապանք պատճառելու համար:**

2. **Հստակ որոշեք իրականացվող էլեկտրոնային հսկողության տեսակը և օգտագործվող տեխնոլոգիան: Այն կանոնավոր պարբերականությամբ վերանայվում է՝ հաշվի առնելու նոր տեխնոլոգիաները:**

3. **Հաշվի առեք տարբեր գործոններ, ինչպիսիք են տարիքը, հաշմանդամությունը, ինչպես նաև ոտնձգությունից տուժած անձի, կասկածյալի կամ իրավախախտի այլ համապատասխան հատուկ պայմանները կամ անձնական հանգամանքները՝ որոշելու համարո, թե կատարման ինչ եղանակներով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկողությունը: Անկանոն կյանք վարող անձանց պարագայում դա ավելի բարդ է:**

4. **Բոլոր համապատասխան համակարգերի և իշխանությունների կողմից զոհակենտրոն մոտեցման դրսևորումը կնպաստի ոտնձգությունից տուժած անձի ավելի մեծ ինտեգրմանը արդարադատության համակարգի գործընթացին: Դա հնարավորություն կտա ոտնձգությունից տուժած անձանց իրենց ավելի լավ տեղեկացված զգալ և կբարելավի նրանց անվտանգության զգացումը:**

5. **Էլեկտրոնային հսկողության իրականացման համար ստացեք ոտնձգությունից տուժած անձի, նրա ընտանիքի ազդակիր անդամների, ինչպես նաև իրավախախտի համաձայնությունը: Եթե իրավախախտը համաձայնություն չի տալիս, ապա նա դժվար թե կատարի պահանջները, ինչը նվազեցնում է հսկողության արդյունավետությունը:**

6. **Էլեկտրոնային հսկողությունը չպետք է կիրառվի ընտանեկան բռնության դեպքերում, եթե առկա է ոտնձգությունից տուժած անձի կյանքին սպառնացող վտանգ:**

7. **Պետք է նաև հոգ տանել, որ իրավախախտները, որոնք մեծ վտանգ չեն ներկայացնում ոտնձգությունից տուժած անձի համար, չենթարկվեն ազատության այնպիսի սահմանափակումների, որոնք ենթադրում է էլեկտրոնային հսկողությունը:**

8. **Անհրաժեշտ է ապահովել, որ ոստիկանությունից և դատարաններից բացի, ոտնձգությունից տուժած անձը նույնպես, ցանկության դեպքում իրավունք ունենա հայցել պաշտպանական որոշում արձակելը:**

9. **Ոտնձգությունից տուժած անձանց և իրավախախտին հստակ տեղեկատվություն է տրամադրվում նրանց իրավունքների և պարտականությունների մասին՝ իրենց համար հասկանալի լեզվով և ձևով: Այդ նպատակով տեղեկատվությունը տրամադրվում է թ՛ե բանավոր, և թ՛ե գրավոր տեսքով:**

10. Հստակ արձանագրվում են որոշման արձակման պատճառները և այն ուժի մեջ մտնելու օրը և ժամը: Իրավախախտին և ոտնձգությունից տուժած անձին երկուսին էլ ծանուցվում են որոշման մասին: Կարևոր է, որ հսկիչ կենտրոնն ունենա որոշման պատճենը և նախատեսված բոլոր սահմանափակումների նկարագրությունը: Եթե հրատապության պատճառով որոշումը դատական մարմնի կողմից չի կայացվել, դատարանը դրան անդրադառնում է ողջամիտ ժամկետում:

11. Որոշման գործողության ժամկետը և ցանկացած սահմանափակում հստակ նշվում է որոշման առաջին էջում և այդ մասին տեղեկացվում են բոլոր շահագրգիռ կողմերը:

12. Անհրաժեշտ է սահմանել տեխնիկական սարքերի նվազագույն չափանիշները, այդ թվում՝ ապարանջանի, ոտնձգությունից տուժած անձի և իրավախախտի շարժական հսկիչ սարքերի և հսկիչ կենտրոնում օգտագործվող սարքերի:

13. Արգելված գոտիների հեռավորությունը սահմանվում է օրենքով: Տարբեր հանգամանքները, օրինակ՝ գյուղական և քաղաքային բնակավայրերի առանձնահատկությունները հաշվի առնելու համար անհրաժեշտ է շրջահայաց մոտեցում:

14. Հսկիչ կենտրոնը պատասխանատու է համապատասխան որոշման կատարման մշտադիտարկման, խախտման կամ տեխնիկական խափանումների դեպքում կատարողի հետ կապ հաստատելու և հանգամանքներից ելնելով ոտնձգությունից տուժած անձին որոշման փաստացի կամ հնարավոր խախտման մասին նախազգուշացնելու համար:

15. Հսկողության ենթարկվող հարցերի տեսակները սահմանվում են համապատասխան մարմինների համար հստակ գործառնական ընթացակարգով, որոնց թվում են հսկողության կենտրոնը, համապատասխան անվտանգության մարմինները, ոստիկանությունը, դատարանի աշխատակազմը, դատական համակարգը և քրեակատարողական հիմնարկները:

16. Հստակ սահմանվում են այն պայմանները, որոնց դեպքում հսկողությունը կարող է չեղարկվել և ովքեր կարող են նման դիմում ներկայացնել:

17. Պայմանները, որոնց դեպքում հսկողությունը կարող է կասեցվել և/կամ վերսկսվել, ներառյալ շտապ բժշկական օգնության կարիքի, անվտանգության նկատառումներից ելնելով, իրավախախտի կամ ոտնձգությունից տուժած անձի քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս կամ այլ պատճառներով, պետք է հստակ լինեն, և նման դեպքերի համար ընթացակարգ սահմանվի:

18. Ոտնձգությունից տուժած անձին, իրավախախտին և համապատասխան մարմիններին, ներառյալ սահմանապահներին և իմիգրացիոն ծառայության անձնակազմին տրվում են ցուցումներ՝ տարածքից կամավոր կամ հարկադրաբար հեռանալու դեպքում գործընթացը կառավարելու համար:

19. Խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպող:

20. Աշխատակազմը պետք է համապատասխան պատրաստվածություն ունենա և է կիրառվեն պատշաճ գործառնական երաշխիքներ, տեխնիկական և տվյալների պաշտպանության այլ միջոցներ՝ համակարգի հուսալիությունն ու տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համար:

Հավելված 1. Ռիսկերի գնահատում, անհետաձգելի միջամտության որոշումներ և պաշտպանական որոշումներ

Ռիսկի գնահատում՝ Ստամբուլյան կոնվենցիայի հոդված 51
Ընտանեկան բռնության դեպքերում ցանկացած միջամտության հիմքում ընկած է ոտնձգությունից տուժած անձի անվտանգության ապահովման մտահոգությունը, և իշխանությունները պարտավոր են արդյունավետորեն գնահատել և մշակել ծրագիր՝ յուրաքանչյուր դեպքով կառավարելու ոտնձգությունից տուժած անձի առջև ծառացած անվտանգության խնդիրները: Ռիսկի գնահատումը հաշվի է առնում առկա սպառնալիքները, բռնության նախորդ դեպքերը և, մասնավորապես, բռնության կրկնման հավանականությունը, ներառյալ անձի կյանքին սառնացող վտանգը և իրավիճակի լրջությունը, այդ թվում՝ իրավախախտի մոտ զենքի առկայությունը: Հետագա բռնության ռիսկը գնահատելու և կանխելու համար ձեռնարկված ցանկացած միջոց նաև երաշխավորում է, որ իրավախախտի իրավունքները մշտապես հարգվեն: Ձեռնարկված միջոցները չպետք է առաջացնեն կրկնազոհականացում կամ մեծացնեն ոտնձգությունից տուժած անձանց կրած վնասը:[80]

Պաշտպանական որոշման գործողության ժամկետը թողնվում է յուրաքանչյուր մասնակից պետության հայեցողությանը, սակայն սովորաբար այն տևում է 10 օրից մինչև 1 ամիս և հաճախ երկարաձգվում է: Իրավախախտը իրավունք ունի վիճարկել որոշումը դատարանում:

Անհետաձգելի միջամտության որոշումներ՝ Ստամբուլյան կոնվենցիայի հոդված 52
Անհետաձգելի միջամտության որոշումները ընտանեկան բռնությունից տուժած անձի անվտանգությունը անմիջական վտանգի դեպքում երաշխավորելու ամենաարդյունավետ միջոցն են: Անմիջական վտանգը վերաբերում է ընտանեկան բռնության ցանկացած իրավիճակին, որի դեպքում **վնասի հավանականությունը բարձր է կամ այն արդեն իսկ տեղի է ունեցել և հավանական է, որ նորից կրկնվի**:[81] Դրանք նախատեսված չեն որպես փոխարինող այլ միջոցների, ինչպիսիք են ձերբակալությունը, կալանավորումը և քրեական հետապնդումը: Ավելին, դրանց արձակումը չպետք է կախված լինի կատարված բռնության փաստից կամ կապված լինի քրեական պատասխանատվության ապացույցների հետ:[82] Դրանց թվում են.

- ✓ Ոտնձգությունից տուժած անձին կամ վտանգի տակ գտնվող անձին մշտական բնակարանից այլ բնակության վայր տեղափոխելը բավարար ժամկետով:
- ✓ Իրավախախտին՝ բնակավայր մուտք գործելու արգելքը:
- ✓ Ռիսկի տակ գտնվող անձի հետ շփվելու արգելքը:

Սահմանափակող կամ պաշտպանական որոշումներ՝ Ստամբուլյան կոնվենցիայի հոդված 53
Այդ որոշումները փոխլրացնում են կարճաժամկետ անհետաձգելի միջամտության որոշումները և կարող են արգելել, զսպել իրավախախտի վարքագիծը կամ սահմանել որոշակի վարքագիծ, ներառյալ՝ բնակության, աշխարհագրական մեկուսացման վայրերի, ոտնձգությունից տուժած անձի և/կամ նրա երեխաների հետ շփումների արգելքը:[83] Ստամբուլյան կոնվենցիայի 53-րդ հոդվածով պահանջվող հիմնական հատկանիշներն են.

---

[80] Ստամբուլյան կոնվենցիայի 51–րդ հոդված, Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, 260-263 կետեր:
[81] Ստամբուլյան կոնվենցիայի 51–րդ հոդված, Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, 264-266 կետեր:
[82] Ստամբուլյան կոնվենցիայի 51–րդ հոդված, Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 265:
[83] Ստամբուլյան կոնվենցիայի 51–րդ հոդված, Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, 267-276 կետեր:

- ✓ որոշումը հնարավոր է արձակել անհապաղ պաշտպանություն տրամադրելու համար և որպեսզի դրանից հնարավոր լինի օգտվել առանց ոտնձգությունից տուժած անձի համար անհարկի ֆինանսական կամ վարչական խոչընդոտներ հարուցելու.
- ✓ արձակված է կոնկրետ ժամանակահատվածի համար կամ ընդհուպ մինչև դրա փոփոխումը կամ գործողության ժամկետը լրանալը.
- ✓ անհրաժեշտության դեպքում՝ արձակված է ex parte (մեկ կողմի ներկայությամբ) և ուժի մեջ մտնեն անհապաղ.
- ✓ հասանելի է՝ անկախ այլ վարույթներից կամ ի լրացումն դրանց.
- ✓ թույլատրելի լինի՝ ապագա վարույթների ընթացքում ներկայացվելու համար:

- ✓ Սահմանափակող կամ պաշտպանական որոշումների կատարումը պետք է արդյունավետորեն վերահսկվի: Վերահսկողության եղանակները ներառում են.
- ✓ Ոստիկանության պարեկություն.
- ✓ Ոտնձգությունից տուժած անձի հետ շփման նախաձեռնում.
- ✓ Էլեկտրոնային հսկողություն՝ որոշումը խախտելու հակված իրավախախտների պարագայում.
- ✓ Էլեկտրոնային հսկողություն բարձր ռիսկային դեպքերում:

Օգտագործված գրականություն

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (CETS No.210)՝ https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=210

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2014)4 հանձնարարական անդամ պետություններին էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2014թ. փետրվարի 19-ին) և Բացատրական հուշագիր (2016թ.)՝ https://rm.coe.int/09000016800cc24b

Հոդվածներ ամսագրերում

Belur J. et al, (2020), *A systematic review of the effectiveness of the electronic monitoring of offenders*, Journal of Criminal Justice DOI: 10.1016/j.jcrimjus.2020.101686
Council of Europe, (2017), *Emergency Barring Orders in Situations of Domestic Violence: Article 52 of the Istanbul Convention*

Erez E. et al (2012) *GPS Monitoring Technologies and Domestic Violence: An Evaluation Study*. GREVIO Baseline Evaluation Report Spain, GREVIO/Inf(2020)19: https://rm.coe.int/grevio-s-report-on-spain/1680a08a9f

Holdsworth Dr E. and Párkányi Dr E, (2022) *Electronic Monitoring and probation goals: a symbiotic relationship. Report of the 12th European electronic monitoring conference* 23-25 May 2022, Helsinki 2022

Ibarra P. Gur O. and Erez E. (2023), *Mismatches and criminal justice policy: The case of GPS for domestic violence*, Criminology & Criminal Justice DOI: 10.1177/17488958231159364

Martinovic, M. Schluter, P. (2012) 'A Researcher's Experience of Wearing a GPS-EM Device' Current Issues in Criminal Justice 23:3

Nellis M. (2015), *Standards and Ethics in Electronic Monitoring: Handbook for professionals responsible for the establishment and the use of electronic monitoring*, Council of Europe

Otero (2009), *Electronic monitoring, an alternative way of preventing aggression and helping social*
Rehabilitation, Journal of Organisational Transformation and Social Change 6: 2

Párkányi E. and Hucklesby A, (2021), *Tracking Children in their Best Interests: electronic monitoring in three European juvenile justice system,s* https://trackingchildren.leeds.ac.uk/the-project/report/

Privacy International, (2022) *Electronic monitoring using GPS tags: a tech primer*, 9 February 2022, https://privacyinternational.org/explainer/4796/electronic-monitoring-using-gps-tags-tech-primer

Privacy International, (undated) *Safeguards for Public Private Surveillance Partnerships*

Scottish Government, (2019), *Electronic monitoring: uses, challenges and successes* https://www.gov.scot/publications/electronic-monitoring-uses-challenges-successes/documents/

Tennessee Board of Probation and Parole (2007) *Monitoring Tennessee's Sex Offenders Using Global Positioning Systems: A Project Evaluation*, Tennessee Board of Probation and Parole in conjunction with Middle Tennessee State University Department of Criminal Justice Administration. https://ccoso.org/sites/default/files/import/BOPP-GPS-Program-Evaluation%2C-April-2007.pdf
United Kingdom Government, (2023) Equality *Impact Assessment: GPS electronic monitoring expansion pilot*, UK Government. 26 May 2023
https://www.gov.uk/government/publications/offender-management/equality-impact-assessment-gps-electronic-monitoring-expansion-pilot

Էլեկտրոնային կայքեր

Spain, https://violenciagenero.igualdad.gob.es/
Domestic violence: 'Electronic bracelets are a first step, but we have to go further' (france24.com) 26.09.20
Le point sur le bracelet anti rapprochement en France (protegerlenfant.fr)

Առանցքային գործոր

Kurt v Austria, [2021] ECHR 508 (Մեծ պալատ)
Tkhelidze v Georgia [2021] ECHR 614 (Մեծ պալատ)
Yildirum v Austria, Communication no. 06/2005, CEDAW/C/39/D/6/2005

Նյութեր լրացուցիչ ընթերցանության համար

Ahmad Nawi, H.S. et al. (2022) 'Assessing Community Readiness For Electronic Monitoring Device Towards Community Well-Being', European Proceedings of Multidisciplinary Sciences, Reimagining Resilient Sustainability: An Integrated Effort in Research, Practices&Education. Available at: https://doi.org/10.15405/epms.2022.10.64.

'Data and statistics in Portugal - Online training materials on violence' (2020), 24 August. Available at: https://training.improdova.eu/en/data-and-statistics/data-and-statistics-in-portugal/ (Accessed: 18 April 2023).

Domestic Violence Protection Notices (DVPNs) and Domestic Violence Protection Orders (DVPOs) guidance (no date) GOV.UK. Available at: https://www.gov.uk/government/publications/domestic-violence-protection-orders/domestic-violence-protection-notices-dvpns-and-domestic-violence-protection-orders-dvpos-guidance-sections-24-33-crime-and-security-act-2010 (Accessed: 18 April 2023).

Duenkel, F. (2018) 'Electronic Monitoring in Europe – a Panacea for Reforming Criminal Sanctions Systems? A Critical Review', Kriminologijos studijos, 6, pp. 58–77. Available at: https://doi.org/10.15388/CrimLithuan.2018.6.3.

Dünkel, F., Thiele, C. and Treig, J. (no date) 'Electronic Monitoring in Germany'.
'Electronic Bracelet Will Protect Domestic Violence Victims in Norway | The Nordic Page' (no date). Available at: https://www.tnp.no/norway/panorama/3539-electronic-bracelet-will-protect-domestic-violence-victims-in-norway/ (Accessed: 18 April 2023).

'Electronic Monitoring of Domestic Violence Cases' (no date) 112.gov.ge. Available at: https://112.gov.ge/?page_id=7920&lang=en (Accessed: 24 April 2023).

Employees of the Probation Service test electronic monitoring devices (no date). Available at: https://www.moj.am/en/article/1776 (Accessed: 18 April 2023).

Experts of the Committee on the Elimination of Discrimination against Women Commend Georgia on Mechanisms to Advance Women's Empowerment, Ask about Initiatives to Combat Domestic Violence and Gender Inequality in the Labour Market (2023) UN GENEVA. Available at: https://www.ungeneva.org/en/news-media/meeting-summary/2023/02/experts-committee-elimination-discrimination-against-women-0 (Accessed: 24 April 2023).
Freixes, T. and Román, L. (2014) Protection of the Gender-Based Violence Victims in the European Union. Publicacions Universitat Rovira I Virgili.

Granja, R. (2021) 'The Invisible Implications of Techno-Optimism of Electronic Monitoring in Portugal', Comunicação e sociedade. Translated by R. Granja, (40), pp. 247–267.

Herrera, M.J. and Amor, P.J. (2023) 'Protective Orders for Male Perpetrators of Intimate Partner Violence: Differences Between Violators and Non-Violators', Violence Against Women, p. 10778012231163578. Available at: https://doi.org/10.1177/10778012231163578.

Hwang, Y.I. (Jane), Simpson, P.L. and Butler, T.G. (2021) 'Victim and Victim Support Staff Experiences of a Domestic Violence Electronic Monitoring Program in Australia', International Journal of Offender Therapy and Comparative Criminology, p. 0306624X211058950. Available at: https://doi.org/10.1177/0306624X211058950.

In the words of Ana Jibladze: "when there is an actual risk of repeated violence, electronic bracelets are an effective means of protecting victims." (2022) UN Women – Georgia. Available at: https://georgia.unwomen.org/en/stories/in-the-words-of/2022/11/in-the-words-of-ana-jibladze-when-there-is-an-actual-risk-of-repeated-violence-electronic-bracelets-are-an-effective-means-of-protecting-victims (Accessed: 18 April 2023).

Maia Van Kline (2022) Domestic abuse perpetrators in 4 Romanian counties will be tracked by means of electronic tagging as pilot project is finally launched, Romania Insider. Available at: https://www.romania-insider.com/domestic-abuse-perpetrators-electronic-tagging-aug-2022 (Accessed: 18 April 2023).

Nellis, M. (2021) Electronic Monitoring Around the World, Oxford Research Encyclopedia of Criminology and Criminal Justice. Available at: https://doi.org/10.1093/acrefore/9780190264079.013.642.
Pre-trial electronic monitoring in Portugal | Centre for Crime and Justice Studies (no date). Available at: https://www.crimeandjustice.org.uk/publications/cjm/article/pre-trial-electronic-monitoring-portugal (Accessed: 18 April 2023).

shareit (2013) 'Electronic bracelets for domestic violence offenders', Portugal Resident, 29 August. Available at: https://www.portugalresident.com/electronic-bracelets-for-domestic-violence-offenders/ (Accessed: 18 April 2023).

Այն ուսումնասիրությունը նախաձեռնվել և իրականացվել է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ոստիկանության խնդրանքով: Ուսումնասիրության նպատակն է դիտարկել և հասանելի դարձնել ընտանեկան բռնության կամ միջանձնային բռնության դեպքերում իրավախախտների նկատմամբ էլեկտրոնային հսկողության կիրառման՝ ընտրված մի քանի երկրների փորձը: Թեև էլեկտրոնային հսկողությունը հաճախ օգտագործվում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ այլընտրանք հանդիսանում դատապարտմանը հետևող ազատությունից զրկելուն, մեր ուսումնասիրության կոնկրետ նպատակն է դիտարկել էլեկտրոնային հսկողության կիրառումը անհետաձգելի միջամտության որոշումների, պաշտպանական որոշումների և սահմանափակման որոշումների պարագայում:

HYE

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքային առաջատար իրավապաշտպան կազմակերպություն է: Այն ընդգրկում է 46 մասնակից պետություններ՝ ներառյալ Եվրամիության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որի նպատակն է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կիրարկումը մասնակից պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE